

A38

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ V

ՆՈՐ ԱՌԱՎՈՏ

ԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵԼԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՐՈՐԱՆ. 31

891.99

2-17

ՊԵՏՅՐԱՏ * 1931 * ՅԵՐԵՎԱՆ

A 405. Акондн
Натае унро
29/11/94 Парасян
2396

2396

A 38
891.99

2-17

A405

акондм

ՀԱՅԿԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱՆ 6 NOV 2011

ՆՈՐ ԱՌԱՎՈՏ

Новое утро

(ՀԱՅԻՐ ԲԱՆԱՍԵՂՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Центральн. Библиотека
Читальня
№ 2396
гор. Орджоникидзе



ՊԵՏԱԿԱՆ

1931


ՅԵՐԵՎԱՆ

Эрмани

Պ Ե Մ Ի Ն Ս Ի Ն Ս Ե Ր Ա Ն
Գրավիտ. № 6431 (p)
Հրատ. № 1658
Պատ. № 2844
Տիր. 5000



155.77



Հովհաննէս Զոհրաբեան

ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻՆ

Նո՛ւան չեմ յես ձեր սիրելի պոլետներին,
Ձեր քուրմերին յերգս ոտաբ — մի խորթ հնչյուն.
Յես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին,
Այս առորյա, մեղկ ու թունոտ մղձավանջում:

Յես յերգեցի գործարանի սև աշխատանք,
Յե՛վ ճարճատված պողպատ մեջքերն անիվի տակ.
Ստեղծագործ հրաշքները կոշտ ձեռքերի,
Հաղթանակող թափը նրանց վեհ պալքարի:

Սթափման յերգ յես յերկեցի լքվածներին,
Յե՛վ հրավել՝ պատրաստ լինել զարթնոց որին.
Յես յերգեցի աշխարհ ցնցող խենթ-փոթորիկ,
Վորոտ ու շանթ տեղալուց յես խաղաղ յիրկինք:

Յե՛վ մարդկութեան հավատալիքն յես յերգեցի —
Ծաղիկներով վողջ պսակված մի մեծ յերթի...
Յո՛ւս յերգեցի հուրը հալող ժանտ բռնութեան,
Յե՛վ հրապուրը նորեկ կյանքի գեղեցկութեան...

Վե՛հ, նման չեմ ձեր սիրելի պոլետներին,
Ձեր քուրմերին յերգս ոտաբ, մի խորթ հնչյուն.
Յես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին,
Այս առորյա, մեղկ ու թունոտ մղձավանջում.

1916

ՄԵԿ ԵԼ, ՄԵԿ ԵԼ

Հեյ, ձեզ մատաղ, բանվոր աղերք,
Մեկ ել, մեկ ել մի գնդի տվեք.
Մի գնդի տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին:

Միահամուռ մեր ույծերով,
Հերոսների արջան գնով
Թեև ընկավ ցարն իր գահից,
Բայց չի ջարդված միանգամից:

Այժմ ել ցարն և մեզ աղաչում,
Վոր խնայենք վերջին շնչում.
Բայց, ձեզ մատաղ, բանվոր աղերք,
Մեկ ել, մեկ ել մի գնդի տվեք...

Մի գնդի տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին:

1905, հոկտեմբեր 17, Թիֆլիս:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տեսե՛լ ես, ընկեր, ալեկոծումը ահեղ ուղկյանի,
Ուր յերկու ալիք շարժուն սարի պես իրար են վաղում,
Իրար են վաղում փրփուրը բերնին հովազի նման
Ու հոխորտալով՝ զարնվում, փշրվում ալազի նման...
Իսկ յերբ անցնում և վրժի լուպեն, հուզումը վայրէ,
Տեսե՛լ ես ինչպես հանգստանում և հսկան ջրերի,
Մեղմանում և նա... մանուկի նման ժպտում և ալիք,
Ալիքի միջից մի յերգ աննման, ծիալով մեղմիկ,
Շոյում լսելիք...

Լսե՛լ ես, ընկեր, ըմբոստ յերկնքում կոչը վորոտի,
Վոր դղրդում և վորպես մի պայթյուն մեծ թնդանոթի.
Տեսե՛լ ես ինչպես ամպերի կրճիկն կաճակը զիգ-զագ
Իր լիզն և մխում փռված կոտ, շեշտակի ու ցնցում աշխարհ,
Կամ ինչպես թափով ծառս-ծառս և լինում ցասկոտ
փոթորիկ,

Հսկա ծառերին չոքե-չոք անում, դարձնում խաղալիք,
Մինչ վոր տեղում և հեղեղը վայրագ և ինչպես փրկանք,
Ծանր յերկունքից ազատում աշխարհ.
Բնությունը հաղթ ժպտում և ապա պայծառ արեգին —
Վորպես պատասխան չար արհավիրքին...

Լսել ես, ընկեր, ծանդականի ճիշդ հուսահատ,
Վոր գալարվելով, արգանդի ցավից պոռա անընդհատ...
Վերավոր ընկած այն եգ առյուծն է այնպես մոռնում,
Յերկունքի ժամին Մեծ ազատության ոգնության
Կանչում.

Կյանքի և մահու պալքարը մղող այն մայրն է տանջվող...
Իսկ չերբհասնում է հուսո լախտավոր ժամը փրկավետ,
Տեսել ես ինչպես այդ խորհրդավոր վեհ պալթումից հետ
Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ, վորպես վառ
Հակինթ,
Փայլում է նրա արնոտ շուրթերում, դեմքը զարդարում:

Այդպես եր անա և այն վեհ ժամին Հեղափոխության,
Յերբ վոր բաղխվեցին իրար հակառակ չերկու ախոյան.
Ալիքի նման խուլ մոռնացին չերկու հոսր ույծ,
Աշխարհը ցնցվեց... ու յեղան կործան կարգերը վատույծ.
Վալրագ հեղեղին, շանթ ու փոթորկին հետևեց թափով
Հեղեղ ցնծության,
Յերկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Ազատության:
Ընկեր իմ, ընկեր, անա մահուկը Հեղափոխության.
Փորձության ժամին չերգվիր կրճքովդ պաշտպանել
Նրան:

ԳՈՐԾԱՐԱՆ

Ահա գործարան...
Նայում եմ նըրան՝
Նա հրեշի պես
Բացել է բերան,
Տնքում է, փընչում,
Հուր ու մուխ շնչում,
Յեվ մարդը այնտեղ,
Վորպես մի մթեղ,
Նըրա արնախում
Բացված չերախում
Կարիքի դուռն է
Անընդհատ բաղխում:

Ահա գործարան...
Նայում եմ նըրան՝
Նա իր ցանցապատ
Թելերից պողպատ
Վռատայն է փռել,
Գոտիներ կռել
Յեվ վորպես հսկա
Մի արնախում սարդ
Արջունն է ծծում
Աշխատավորի,
Մարմինը հյուծում
Նաչար բանվորի...

Ահա գործարան...
Նայում եմ նըրան՝
Այժմ դարձել ե
Հսկա դամբարան...
Այնտեղ մարդըն ե
Կենդանի թաղված.
Նա՝ վոր իր կյանքում—
Ծաղիկ հասակում
Ծաղիկ չտեսած՝
Արյուն ե թքում
Յեվ մահը իրա
Անեծքով կնքում...

Կամ չե՝ անիվը
Մի ակնթարթում
Բանավորին սեղմած
Իր պողպատ թաթում,
Տեսնում ես հանկարծ
Ոճորք ե նետում
Ու մեքենայի
Տալով ճակատին՝
Տապալում գետին...
Ահա գործարան...
Նայեցեք նըրան՝
Այժմ դարձել ե
Հսկա դամբարան...

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Մի յերգ գիտեմ յես աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Վորոտի պես հատուլ, խրոխտ
Մի յերգ գիտեմ յես աննման:

Ծնվել ե նա մութ հանքերի
Մետաղակուռ յերակներից,
Ու ձայն առել քլուկներին
Ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից:

Մոռնդ առել, ջիղ ու արյուն՝
Բանուկ, ուժեղ բազուկներից,
Գործարանը խանդ ու ավյուն
Շնչել նրան իր ժխորից:

Հմալք ունի յերգս այնպես,
Հոգսի ժամին թե վեր յերգես՝
Թախիծ ու վիշտ կը քանա—
Լքված հոգուն նեցուկ ե նա:

Հեյ, իմ յերգը միշտ աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Վորոտի պես հատուլ, խրոխտ
Մի յերգ գիտեմ յես աննման:

Դ Ա Ր Բ Ն Ի Յ Ե Ր Գ Ը

Զանգի, դանդի, ընկեր, մեզ բախտ կոներ—
Թող դողդողա մեծ սալը,

Շանթի տարափ մեր շուրջ փռներ—
Լուսավորվի աշխարհը:

Մենք բնության առողջ զավակ՝
Քրտինք հեղներք— սև արյուն,
Ջլուտ բազկով ճարներ վաստակ,
Մոհառաջ չլինենք թշնամուն:

Զանգի, դանդի, ընկեր, ել կանգ չառներք,
Մոտ և ահա լավ որը...

Այնպես թափով սալին դարձներք,
Վոր դողդողա աշխարհը...

1905

Ե Տ Ա Պ Ը

Թեթևի կապված, կող-կողի հպված՝
Յեվ քայլում եյին, և՛ նայում առաջ...
Ամառ եր որը, փոշու մեջ խեղդված,
Բայց խրոխտ ու հաղթ՝ և՛ քայլում եյին,
Յեվ նայում առաջ:

Յեվ կայականորով քրտինք եր ծորում
Բաց ճակատներից, պարանոցներից,
Յեվ տապ հողի մեջ ծաղիկ եր ծլում
Ամեն մի կաթիլ գետին գլորվող
Քրտինք-գոհարից:

Շատ գնացին, քիչ՝ հպարտ, չպարտված՝
Նրանց կրծքերից չլսվեց հառաչ.
Վերջը կանգ առան Ուրալի դիմաց,
Բայց նրանք դարձյալ կարմիր ակիքով
Սուրում են առաջ...

1911

ՄԵՌԱՆ՝ ԶԿՈՐԱՆ ..

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան,—
Մեռան՝ չկորան...
Կրակ եր ցայտում նրանց տաք ունքից,
Շանթը՝ շրթունքից,
Յերբ խոսում ելին ծով-ամբոխի մեջ
Վիշա ու կարիքից.
Վրեժի, ցասման հրով բորբոքված
Նրանք բեմ յեկան՝
Յեվ բեմը դարձավ արյունով ներկված
Զոհերի սեղան:
Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան...
Այսոր բանտերում, վաղը աքսորում,
Մյուս որ կախաղան
Հանելու համար դահիճը դաժան
Կացինն է սրում.
Բայց հերոսների շուրթերից սեղմված
Նշովք չէ լավում,
Բաժակն են ըմպում Վերածնունթյան
Սյունիքին կախված,
Ու հիմնը լերգում Հեղափոխության՝
Հպարտ—չհաղթված.

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան...
Հեյ, ազատության անպարտ զինվորներ,
Դուք, վոր անխուղ
Ներկեցիք փողոց ու գործարաններ
Ձեր տաք արյունով,
Նույն վայրում այսոր ջահիլ-ջիվաններ
Ըմբոստ շարքերով
Ձեր գովքն են անում... ձեր թափված արյամբ
Մնվում, ամրանում...
Յեվ անմահներիդ չերդվում են անվամբ
Ու հպարտանում,
Վոր դուք, հերավի, պատվով, վեհությամբ
Ձեր գործը տարաք,—
Մեռաք՝ չկորաք:

1906

ՅԵՍ ԶԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ...

Յես ձեզ ասում եմ, վոր կգա այն ուրը,
Յերբ իրավագուրկ ամեն մի բանվոր
Իր աշխատանքի կդառնա տերը
Ու ազատ, ուրախ կապրի բախտավոր:

Նենգավորները դժնդակ սրտից
Կիրքը մարդկային կկորչի անհետ,
Կըլոխ չեսը շանթված ամոթից
Յեզ գայլն ու գառը կապրեն իրար հետ:

Ու ել չի տիրիլ անարդ ստակը,
Մարդուն մարդու դեմ չի զինիլ անվերջ,
Ամբիոն կեղնի հալալ վաստակը,
Իրար հոշոտող կռվին կտա վերջ:

Յես ձեզ ասում եմ... մոտ ե այն ուրը...
Թող ստրուկներին թվա այդ չերազ,
Նրան կհասնի կովող բանվորը,—
Մարտնչողներին դա հեզ մուրազ:

Պ Ա Հ Ա Կ Ը

Թող կորչեն վողիք, լքուն, վարանոտ,
Յես կանգուն եմ դեռ իմ դիրքի վրա,
Յեզ ինչպես պահակ, մինչ լույս առավոտ,
Պիտի հսկեմ վես բարձունքը նըրա:

Յեզ յեթե հանկարծ թշնամին կյանքիս
Մթին անկյունից մահադավ լարի՝
Վճչինչ... կմեռնեմ ժպիտը դեմքիս—
Նշան հավատո գալիք հաղթ որի:

Իմ չետքից կգա մի առողջ սերունդ—
Ուժեղ և հպարտ իր նախորդներից,
Փորձի մեջ բովված մարտիկների գունդ—
Դիրքը թշնամուց կփրկի նորից:

Յեզ ստեղծագործ վողեորությամբ
Ինչ վոր կխավարտ մնաց մեր որից՝
Կտա լրացում վեհ գիտակցությամբ.
Վողջողն ձեզ, չեղբայրք, ձեր նախորդներից:

1915



Կ Ա Թ Ս Ա Վ Ա Ր

Վորպես դող բռնած, գայրացած առյուծ
Շողկակաթսան և յիւում, մօրնչում,
Հսկան, հրեղեն լեղուհներ հանած՝
Դժոխքի նման հնոցն և փնչում:

Վիթխարի գաղան հնոցի առաջ,
Բոց ու կրակի տապից թառամած՝
Մեր կաթնավարը հսկում և նրան
Ուշքն ու միտքը ջրչափին հառած:

Եմառ ու ձմեռ նա դուրի կարոտ—
Քրտինք և ծորում դալուկ ճակատից,
Վոր աղոսելով չերեսը մրոտ,
Սև հացի գին և պահանջում բախտից:

Յեզ մի սև որ ել կաթսան պայթելով,
Հեք կաթնավարին կզրկի կյանքից.
Հալած են հացը, որ արջան զնով
Կըխի նրան հնոցի կրծքից:

1904

Ա Մ Բ Ո Ւ Ն — Ի Մ Ա Շ Խ Ա Ր Ք Ը

Վորքան ել ուզեմ ձգտել դեպի ձեզ
Վեհապանձ սարեր,
Ու փարվել մաքուր ձեր ձյունյա կրծքին,
Վորքան ուզեմ յիս
Սլանալ վեր, վեր,
Արծիվի նման հալարտ սավառնել՝
Ելի՜ չեմ կարող, կուսական լեռներ,
Յերկիրը թողնել,
Վոր խաթխափում և կեղտ ու մուրի մեջ,
Տառապում անվերջ.
Յեզ չես կտրիքի աշխարհն եմ ընտրում—
Ճնշված ու լքված,
Ուր վիշտ ու զրկանքն իրար հետ գրկված՝
Մի յեղք են փնտրում:

Յեզ դուք, վառ աստղեր,
Վորքան ել գլուխդ,
Սիրտը պարուրող լինի ձեր հմայք,
Վորքան ել գերեք հոգիս չերազող
Ու ինձ չերկնային տանեք ձեր աշխարհ՝
Դարձյալ չեմ կարող.
Կապված եմ կամա իմ մայր հողի հետ,
Հար ու հարատև արթի լացը,
Յազ ու կսկիծը,
Ինձ կոչ են անում, թե՛ արի՛, պոչե՛ս,
Մեր վիշտը լացիլի,
Մեզ ընկեր զարձիր:

Ո՛ր, ինչպէս քննարկեմ ե յերկինք վերանալ,
 Վիշտ, հոգս մոռանալ,
 Լուսնի փալլի մեջ լողալ, սավառնել,
 Աստղերը գրկել,
 Բայց և անողոք իրականութեան
 Ուրվականը սե,
 Վորպես մի ժանտ դե,
 Մարմնացած ըմբոստ բողոքի նման —
 Տալիս և հրաման.
 — Իջիր յերազկոտ յերկնային գահից
 Կյանքին մոտենալու,
 Նրան յերգ ունիս, վերք ունիս տալու:
 Ու պիտի իջնեմ... ամբոխից փախ տալ
 Դժվար ե, դժվար.
 Հոգիս ձուլված ե նրա հոգու մեջ
 Զղերս կապված նրա ջղերին,
 Մի անգամ ճանապարհ
 Գոյութուն չունի յերբեք ինձ համար:
 Յեզվ վորքան դյուրթող լինի ձեր հմայք,
 Յերկինք ու աստղեր,
 Կա մի քրտնալի, կարեքի աշխարհ —
 Ծնշված ու լքված՝
 Նրան եմ ընտրում,
 Այնտեղ վիշտ, գրկանք իրար հետ գրկված՝
 Մի յեղբ եմ փնտրում...

1905

Մ Ա Ք Ա Ռ Մ Ա Ն Ժ Ա Մ Ի Ն

Մուրճը ձեռքներիդ մաքառման ժամին,
 Վորոտ ու թափով զարկեցեք սալին.
 Առանց վտրանման, կալծակի նման
 Զարկեցեք արագ՝
 Քանի ջեռուցած յերկաթն ե տաք-տաք:

Յեզվ վա՛յ ե նրան, ով այս վեհ ժամին
 Յեզվ կվարանի, և՛ կթուլանա.
 Ով իր ձեռքերի կոշտերի վրա
 Հույս չի ունենա:

Յերկաթը շիկնած կսառի այն ժամ,
 Դե՛հ, լեկ ու նորից վառիր դու քուրան,
 Նետիր զանգվածը, լարիր նորից ջանք,
 Վոր հուզվի կրակ...
 Վո՛չ, զարկեք, քանի յերկաթն ե տաք-տաք:

Մուրճը ձեռքներիդ պատրաստ միշտ մնա,
 Իսկ ով մաքառման դեռ չի ընդունակ՝
 Շարքերի միջից թող անհետանա,—
 Թուլյլերի չե տեղ, վո՛չ գործը կատակ...
 Դե՛հ, զարկե՛ք, քանի յերկաթն ե տաք-տաք:

1911

Նորից յեկա այցելության
Գործարանի պարխապներին,
Յերկաթակուռ այն շենքերին,
Վորոնք մի որ
Շունչ ուկեցին իմ յերգերին:

Ահա մտա նրա շեմքով—
Ինձ վողջունեց արթուն սուլիչ.
Մեքենաներն ուրախացած
Ու խենթացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իբար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ,
Շոգեմուրճը հպարտ թնդաց
Ու վորոտաց՝
— Դեռ չեմ հոգնել, դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ձայնակեցեցին
Չարաճճի հազար մուրճեր,
Ծրվվալով վրբնդացին,
Կրկրլացին՝
Վորպես ուրախ դեղձանիկներ:

Յեվ այս փոքր-համերգի մեջ
Մեծ քուրայից ժաթքեց վոստնում:
Այդ անհանգիստ կայծն եր անշեջ
Առավոտյան՝
Նոր կլանքի յերգն եր պատրաստում:

— Յերգենք, — ասացին ճախարակները, —
Մռթը չքանում, լույսն ե մոտենում,
Այս յերգերի մեջ սիրտն ե ամրանում,
Յերգենք, մոռացվին ծանր հոգսերը:

— Կացեք մի վայրկյան, — շշտաց կաթսան, —
Ազդանշան տամ՝ յերգեցեք հետո.
Յեվ շագի հանեց իր խողովակից
Ու մի զիլ սուլոց թողեց յերակից:

Նրա սուր կոչից աշիվը հսկա
Ծռել քնաթաթախ շարժումի ընկավ.
Իսկ իր յեռքից ել գլանակները,
Աշխույժ հոլերն ու ճախարակները:

Յեվ խիստ, համաշափ շեշտ ու թափի մեջ
Լավում եր խրոխտ, ներշնչված մի յերգ.
Մեքենավարն եր աշխատանքի հետ
Ուրախ, յեռանդուն կազմել եր համերգ:

Դ Ա Ր Բ Ի Ն Ը

Ձեռներին զույգ թաթման ունիմ՝
Կրծքին կապած կաշվե գողնոց.
Մուրճը ձեռքին հավատարիմ՝
Յեզ ընկերս—կարմիր հնոց:

Բով եմ դրել ջեռ քուրայում
Սև մետաղե մի մեծ զանգված,
Բայց համառը վոչ արթնանում,
Վոչ հուզում ե կյանքի մի կաշծ:

Բայց ահա, տես, հուրհուրատող
Արևի պես նա արթնացավ,
Յեզ խավարի մեջ խարխափող
Արհեստանոցը լուսացավ:

Յեզ կայծերի տարափի տակ
Բերին նրան, դրին սալին.
Դեհ, մուրճհարներ, չեկեք ձև՝ տանք
Ուշքի չեկած այս համառին...

1914

Յ Ե Ր Կ Ո Ւ Ա Ն Ո Յ Ա Ն

Հաղար բերանի մի բողոք եր այն,
Վոր բռնկել եր վաղ առավոտյան.
Գործարանների շչակներն ելին—
Սուլ-սուլում ելին,
Նավթահանքերի գուղոկներն ելին—
Բողոքում ելին:

Բայց ահա, կարծես, մեղկ ու վհատած՝
Ըմբոստ ձայները իջնում են հատ-հատ,
Մինչդեռ յերկուսը պայքարի մտած՝
Դեռ սուլում ելին զիլ ու անընդհատ:

Մեկը նոցանից խզված հնչյունով,
Նման հուսահատ թոքախտավորի,
Մյուսը՝ առյուծի գոռ մոնչյունով,
Կոչ ելին անում աշխատավորին:

Մեկը ասում եր. — Դեհ, բանվոր ընկեր,
Կարձիր անուշ քուռնդ, արի գործարան.
Յես ել եմ ճնշված քեզ նման, անպեր,
Թող մեր քրտինքով կշտանա աղան:

Մյուսը իշխողի բռնակալ ուժով,
Բիրտ, խրոխտալի, ահարկու գուժով
Ճշում եր կարծես՝ գործի լելիր շուտ,
Ուշանաս՝ փողոց կնետվես անշուշտ:

Յեվ լուսաբացին՝ կապույտ բլուզում
Բանվոր, փեշաքար գործի յեն վազում
Վորի կռան տակ մի կտոր սև հաց,
Վորի ձեռք-լերես ցրտիցը կապտած:

— Ե՛յ, պատրաստ կացեք լերրորդ սուլոցին, —
Այսպես վերջ տվեց թոքախտավորը. —
Թեև ծանր է լուծը մեր գործի,
Բայց և հեռու չե բախտավոր որը...

1905

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն ՈՒՄ

Այն ժխորի մեջ, հեղձուկ և տնող,
Վողջ որը շոինդ, աղմուկն է խոսում.
Յե՛րգ ե, թե՛ բողոք, շանթ ե, թե՛ վորստ,
Վոր այնպես խրոխտ շեշտեր է հյուսում...

Այնտեղ մետաղի տույուժ-դաղգահներ
Թաթերը թաղած քարե հիմքերում,
Սուր ժանիքներով, ինչպես ադահներ,
Պողպատ թերթերի կողերն են քերում.
Դերում են, կրծում խուլ հալնդյունով
Յերկաթե, թուջե, պղնձե սալեր
Յեվ տաշեղի պես փռում հատակով
Հաղար մի ձևի խուճուճ-բուլուլներ:

Հրդեհ է կարծես այնտեղ, դարբնոցում.
Ուր արագ ու վարժ հաղթ բազուկներին
Սիրուեթներն են աջ ու ձախ վազում
Ու մուրը լիզում մռայլ պատերին.
Կայծեր են ցայտում գնդակների պես
Ու խանձում դարբնի մազեր ու յերես.
Սալն է տնքում կռանի զարկից,
Յերկաթը ճչում հասցրած վերքից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵԼԵԳԻԱՆԵՐԻՑ

1

(Պղնձահագնում)

Չարագուժ դողով հոգիս պարուրված՝
Ասացի—լես ել մտնեմ այն աշխարհ,
Ուր հաղարհերով տուն-տեղից զրկված՝
Դիմում են անվերջ սև հացի համար:

Յեվ վոտքս դրի նրա լերախին,
Ու իջա մթին տարտարոսն այն.
Յեվ քանի իջա—փոքրացա վախեն,
Ու կուլ գնացի մեղի նման...

Հոգևարքի պես ճրագներն անույժ,
Հեծկլտում ելին ու ախուր թարթում,
Ջրի կաթիլներն արցունքի նման
Գլխիս կաթկաթում...

Յեվ լավեց ահա մի ձայն վշտագին—
Դերեզմանափոր քլունգի թախիժ.
— Վողջունում են քեզ, իմ հուր թանկագին,
Այսորից ընկեր գրվեցիր դու ինձ...

— Մերն ես, թնդացին ձայներն այնուհետ
Անդրերկրալին խոլ հառաչանքով.
Այստեղ մտնողը ել չի դառնում լետ,
Ու գեցիր ապրել՝ վճարի կյանքով...

1915

Սայլերը փոշոտ ալիսեղ, լալն բակում,
Յերկաթ են կրում—ծանրաքար թերթեր.
Հազար կոկորդ ե ճչում, աղմկում,
Վոր պատրաստ լինեն յերկաթը նետի.
Ուռչում ե դեմքի յերակների ցանց,
Մինչ սայլից մի թերթ գլորում են ցած...
Ու մի բուլ զնգոց... և սուր անկյունով
Հսկան ե արդեն դետնի մեջ ցցված:

Մի տեղ ճռնչով մագուլթ են կրում,
Վոր հյութ, սնունդ տան մեծ կաթսաներին,
Ապա բիթմայով շարժումի բերում
Արհեստանոցի վողջ յերակներին.
Այլ տեղ գործիքներ մեկ-մեկու հետում,
Վոր նորից խոցեն, խայթեն ու հարթեն,
Անիվ-սրոցին շառաչով քսում,
Վոր բանվորներին գործիք հալթայթեն:

Յեվ ամենուրեք ծով ժխորի մեջ
Ալիքածածան աղմուկն ե լավում.
Յճրդ ե, թե բողոք, կոխվ ե, թե՛ վեճ,
Վոր այնպես խրճխտ սրտիցս ե խոսում...

1911

II

ՀԵՎՈՒՄ ԵՔ ՈՒ ՏՆՔՈՒՄ...

Հետև եք ու տնքում, հառաչում ու լացում,
Սև հողի շերտերի - հանքերի տակ տքնում.
Իմ յերգի հերոսներ - տանջանքի մարմնացում, —
... Վոր չերբեք չեք հոգնում, չեք հոգնում...

Յերկաթն և դալարվում ձեր ջլուտ ձեռքերում,
Պողպատը խոնարհվում, գողգոթում ու կքվում,
Աշխարքիս ծանրանքը ձեր սրտում, ձեր հոգում —
... Յեվ սակայն չեք հոգնում, չեք հոգնում...

Նոր կյանքի արշալույս, Նոր Ուղի հարթողներ,
Միշտ շարժվեն, ստեղծող, հարածվեն, անակճեն.
Աշխարքիս վարդարանք, հիացքի կոթողներ —
... Վոր չերբեք չեք հոգնում, չեք հոգնում...

1915

ԳՅՈՒՂԻ ՅԵՐԵԿՈՆ

Ծառերի գլխին վոսկի արեք
Պապ և կապել,
Վոսկեփողին և ոգի մեջ խաղում.
Այստեղ ծխնելուց, այնտեղ գմբեթներ
Կանաչ գյուղերում
Իրենց բարձրությամբ իրար հետ կարծես
Պայքար են մղում:

Նայում ես հեռուն՝ մարգարեյի պես
Խուրձերը ճաղատ, բաց գլուխներով
Շարեշար կարգով հոգել են կարծես
Լայն ու բաց դաշտում,
Յեվ դու չգիտես, նրանք չերգում են,
Թե՛ լուռ ազդեցում.

Յեվ հորիզոնը, վոր վերջալուսի
Կարմիր բեհեզից վրան և հագել,
Նա ել իջել և վերամբարձ գահից՝
Յերկիրը գրկել,
Նա ել հոգել և լսելու նրանց
Ձերմեռանդ չերգեր:

Ճճիս և բնություն... շեն իր գյուղերով —
Հարուստ ու շողուն. ավելի հեռուն
Լայն ու մեծափառ Դանուբը սիրուն
Կանաչ ափերով, կապույտ ջրերով
Հալացք և շոյում,
Յեվ վորքան նայում՝ ինքնամոռացման
Անուշ պատրանքով
Սուզվում և հողիդ՝ հրճվանքի ծովում:

Յեւ թվում ե թե իրենց վիճակից
 Այստեղ չերջանիկ ու գոհ են մարդիկ,
 — Հավաստիակից...
 Բայց յերբ տեսնում եմ կարիքի վորդիք
 Մրոտ ու դեղնած վերագառնալիս
 Մթին հանքերից, գործարաններից)
 Փայտե կոշիկներ քաշած վտաքերին
 Բաց սրունքներով,
 Զրի թիթեղը կախած կողերից
 Յուզում շորերով՝—
 Բացականում եմ.— ո՛հ, դու, սե՛ կարիք,
 Վորքան, հիրավի, ուժեղ ես չեղել,
 Վոր ամեն տեղ ել
 Աշխատավորին կուշտ փորով հացից
 Միշտ զճերկ ես թողել...

1911, Զայցբուրգ

Ի Մ Ս Ե Ր Ը

Սիրել եմ յես նրան հուրը աչքին,
 Շոգու և մազութի բուրբը լանջին.
 Սիրել եմ նրա չերգը հնչուն,
 Խոսքերը իմաստուն և կարկաչուն:

Սիրել եմ յես նրա պտղունցը լալ,
 Աշխատող և ստեղծող մաջը հայալ.
 Սիրել եմ յես նրա նամուսը վառ—
 Քրտինքի աղբյուրից բլուրեղ-զուլալ,

Սիրել եմ յես նրա հուզող անտես,
 Վոր հեռվից փայլում ե հրդեհի պես.
 Սիրել եմ յես նրա կիրքը խանդոտ,
 Անմոռաց, և՛ առողջ, և՛ հիվանդոտ:

Իմ սերը հոգեպար չե՛ մի գրգիռ,
 Հափշտակ պատանու սրտի թրթիռ.
 Իմ սերը կախարդող իմաստ ունի,
 Խոր, անձիր խոհով լի իմաստունի:

Ամեն մի նրա շարժից, բազու ե ծնվում,
 Ամեն մի նրա խոսքից մի միտք սնվում.
 Բոլոր զեղ կանանց մեջ նա չե սիրուն,
 Յեւ ջահել, և՛ անմահ, և՛ դալարուն:

Սիրում եմ, սիրում եմ նրա շողին,
 Նրա շաչ ու ժխոր—նրա հոգին.
 Զգիտեմ, կամ արդյոք մեկն ինձ նման,
 Վոր արագես, խենթի պես, սիրեր նրան...

1922

Արթնացել, վողջ Կովկասն է դարձել մի Զագեն, Շիր-
կանալ,

Վողջ յերկիրը փոթորկել աշխատող ձեռքերի ալիքով.
Յեվ գեղջուկ, և՛ բանվոր կանչում են մեղ ախոր

Վոր կյանքը լերկնել է մի բեղուն հիասքանչ գալիքով:
հասկանալ,

Կովկասն է արթնացել. նայեցեք, ահա նա, Վրաստան,—
Թասակրավ մի գյուղավ—վոսկեսիւն ճակատին փունջ

Չունաթույր բամբակի թփերով պնսվել է Հայաստան,
Յեվ Բագուն նավթերով քահրուբար СССР-ն զարդարել:

Կանգնել եմ պահակի իմ դիրքում յերիններանդ ախ
Ֆոնի.

Զկա ջիղ՝ չխոսի, չկա միտք՝ չհորդել խլրտում:
Բյուրավոր ձեռքերի ալիքով հյուսվել է սիմֆոնի

Միլիոն ձայն ու հնչյուն, միլիոն շեշտ—համերգի
հնչողում:

Ու տեղի յե տվել մի ցնծում, վոր լերկերն է ցնցում,
Ամենուր ողի մեջ հոնդում հե ի շունչ մի մրցում.

Յեռանդի չեն յեկել բահն ու թին, քլունդներն,
մեքենան,

Լսում եք, ասում են՝ ալսուհետ թող ամենքը հաղենան:

Արթնացել, վողջ Կովկասն է դարձել մե Զագեն, Շիր-
կանալ,

Ապրում է իր եպոսն կերտումի... Հեյ, ով չե հասկացել՝
դժո նետվի ու ձուլվի այս կովին հաղթական,

Ստեղծող Կովկասի փոթորկող մեծ ծովերն ենք անցել...
շինարար.

1925

Վ. Ի. ԼԵՆԻՆԻՆ

Կանգնել եմ ահա պատկերի առաջ,
Դիտում եմ նրա գծերը դեմքի.

Սա հանճար է մի, թի՛ք զորավար քաջ,
Վոր պաշտամունքը դարձավ ամենքի:

Գանգը լատ է լերկ, անհաս ու հպարտ,
Ճակատը անհաշտ—կռիվների դաշտ—

Սոր աչքերի մեջ ալրող անապատ,
Անողոք իրա հրով կռապաշտ:

Նայում է հեզուտ անցած աշխարհին
Յեվ կարծես ծաղրում բուրժուաներին.

— Վորքան էլ ուզեք վեր կենալ նորից՝
Դատապարտված եք մահվան ախորից:

1919

ՄՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ-ԻՆ

Աչքերդ կապուլա լեթերի նման
Յեւ հոգիդ շուշան,
Սիրտդ խորունկ ծով, աղնիւմ,
Ընկեր Շահումյան:

Ձայնդ զանգակի վսեմ մի դողանջ
Թափանցել գիտեր
Յեւ վագիտել շշտով իր սքանչ
Վհատած սրտեր:

Խոսքդ չեր լուի խոսք, ալլ սրտադամ հոգր
Կաշմակնող ու վտո,
Թշնամիներդ և մինչև այսօր
Քեզնից դողահար:

Դու հո չմեռար, նորից կյանք առար,
Յեւ հաղթ քո մահով
Ծլեց ու աճեց մի նոր զապալար,
Փովեց աշխարհով:

Մահդ խթանող ցնցեց շատերին
Մեր կուռ շարքերում,
Ո՛ր, լեւ ու մի տես քո մարտիկներին
Կովի դաշտերում:

Քալլում են ահա հազար հազարով—
Քո ճանապարհով,
Յեւ յերդմում քո տեղ վրեժդ լուծել—
Դեհ, գնամ բարով...

1920

ԳԵՎՈՐԳ ԱԹԱՐԲԵԳՅԱՆ

Տեսել եմ նրան վոչ թե յերազում,
Ալ հեռաց կյանքի մեջ.
Տեսել եմ նրան պսակ մուրազով
Տարերքների մեջ.
Ե՛ն վոր ասում են Վահագնի մասին,
Թե կար մի մանուկ
Ալավ-մուկերով հրածին հակա՝
Հենց նա չե՛ վոր կա:
Վորտեղից լեկավ Վահագնը ալո նոր,
Վճր սեպ լեռներից,
Վորտեղից իջավ կորյունն ալս վազրի,
Վճր անտառներից.
Նա սլանում եր նժույզից ել սուր,
Գնդակից արագ
Յեւ Խորհրդային թշնամիներին
Ահում վտանատակ:

Միրում եր սուրալ ազատ ոգի մեջ
 Արծիվի թափով,
 Միրում եր զոհի վրա խոյանալ
 Ազդող սարսափով.
 Բյուրեղ հոգու տեր՝ սիրում եր ցայտել
 Բյուրեղ ջրի պես,
 Կամ դահավթել լեռների ծոցից
 Ջրընկեցի պես:
 Ու վերջին անգամ մի որ ել ուղեց
 Սլափալ վեր, վեր,
 Ողանավի մեջ նորից ստուգել,
 Թե վորքա՞ն է լավ
 Միշտ բարձր լինել... ու հպարտ մեռավ
 Մահով յեղեռնի...
 — Լազուր հոգու տեր հերոսը պիտի
 Բարձունքում մեռնի...

27 մարտ. 1925

ՔՍԱՆ-ՎԵՑ ԵՅԻՆ...

Քսան-վեց էյին...
 Նրանք ամենքն էլ՝ ջահել ու յեռուն,
 Նրանք ամենքն էլ նորաշունչ գարուն—
 Փնջած մեխակներ—Քսան-վեց բնկեր:
 Կռիվ եր զարկել
 Անգղիների դեմ Քսան-վեցն ալն,
 Յեվ անհավասար ու դյուցազնական
 Այն մեծ կռվի մեջ նա գերի ընկել:
 Ու մի առավոտ,
 Յերբ աստղերը կաթ դեռ չէյին հանգել՝
 Ախշա-Կույմաչի դաշտում ավազոտ
 Վեհ Քսան-վեցին բերին կրակել...
 Յերկու-յերկու շարք
 Արձանի նման կանգնել են նրանք,
 Գունատ ու հպարտ, լուռ են, չեն խոսում,
 Արհամարհանքով մահին սպասում...

— Կացեք մի վայրկյան,—
 Հանկարծ վորոտաց սև դահիճներին
 Ընկերն Շահումյան.—
 Յերջանիկ ենք մենք, վոր հիմա կընկնենք
 Յերազած մահով ջահել ու վայել
 Կոմունարներին.
 Բայց լավ իմացեք, վոր հենց իսկ վաղը
 Սպասում ե ձեզ խայտառակ մահը—
 Վայել շներին...

— Մենք այդ լավ գիտենք...
 Յերերաց մի ձայն... Ու չանցավ վայրկյան՝
 Գողացիրներից Քսան-վեցն այն
 Հնձած արտի պես կող-կողի ընկան...

Գնացքը լեռ գնաց...
 Մինչ Քսան-վեցը իրարու գրկած՝
 Ախչա-Կույմալի ավազոտ գոգում
 Ամեն լուսածեղ կուժուժարների
 Հիմն են յերգում...

1920

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը

Գալիս են, գալիս... Նայեք այն ձորին,
 Վերջ չկա ծայրին...
 Գալիս են նրանք սև կմախքների
 Ծով գլուխներով.
 Գալիս, փրփրում բլուր ալիքների
 Հառաչանքներով.
 Նրանց բիրերը կախադանների
 Զվանից պայթած,
 Նրանց կրծքերը համազարկերից
 Ծակտոված, ջարդած,
 Մեկի բերանից դեռ թորմ արյունը
 Կաթ կաթ ծորալիս,
 Մյուսի ճակատին վերքի բերանը
 Մե-սեխն տալիս՝
 Գալիս են, գալիս...
 Գալիս են նրանք և ամպերի պես
 Կուտակվում գիգվում,
 Վրեժ են ուզում...
 Նրանց բողոքից դահիճների դեմ
 Քարերն են հուզվում.
 Ահեղի նրանց վորոտումներից
 Ցնցվում ե յեր ինքը,
 Հողմը նոր դադրած թևերն ե պարզում —
 Գուժում փոթորիկ,
 Զգայուն ծովը թափով յերազում
 Իններորդ ալիք.
 Յեվ մթնոլորտում ցասկոտ հրդեհի
 Կայծը բորբոքվում,
 Հղճը, վիթխարի, անխուսափելի
 Վրեժը կոփվում...

1908

ԸՆԿԵՐ, ԴՈՒ ՄԻ՛ ԼՍ...

I

Ընկեր, դու մի՛ լա, վոր մատաղ կյանքիդ

Սլ ծաղիկներդ շող-ները տարան
Վաղանց դարունքին:

Թեև շատ կոկոն, շատ տերև թափվեց
Թուփիդ շուղերից,

Բայց արմատն ե խոր, վոստեր կծկեն
Նորից ու նորից:

Ելի՛ կբացվեն, ասում եմ յես քեզ,
Նոր կյանքի՛ շեմքին,

Ելի՛ կբացվեն կարմիր վարդի պես
Ցեկող դարունքին:

1911

ՄԻ՛ ԱՍԻՐ

II

Մի՛ ասիր անցավ դարունը կյանքիդ,
Թե մնում ե լոկ անհայտ լերազանք:

Մի՛ ասիր դալար այս ճոխ հասակիդ
Նանդավառ սիրո մեռնում ե հմալք:

Տեսե՛ք ես աշնան անդրանիկ ամսվան
Ծառ ու բաղեղի ներկված տերևներ,
Կարմիր ու նարինջ պսակի նման
Ծառերը հագած հարսանյաց շորեր:

Աշնան տերևներ, կարմիր ու բոսոր,
Վոր կանաչից ել սիրուն եք նայում,
Կարապի լերդն եք յիրգում դուք ախոր,
Իսկ վաղը... նորից կողջունեք դարուն:

1915

ԻՆՆԵՐՈՐԴ ԱՆԻՔ

Յես վաղոց հասա իմ խոր արթունքին
Յե՛վ վայելցի՛ր ինչ արգելված եր.
Յես լաղուց տվի ամեն ինչ կյանքին
Յ. վ աշտո՛ր տրդեն հասակով՝ մի ծեր:

Յեկե՛լ եմ կանգնել մեծ վիհի դիմաց,
Գերեզմանս ե այս, թե՛ մի նոր փորձանք.
Մահ, ինձ միտանիր, դեռ քիչ էլ մի կաց —
Զոյում եմ իմ մեջ դեռ յեռուն մի կյանք:

Մի կոխվ վերջին, կռիվը գալիք
Թող վարեմ ուրախ՝ մեռնեմ վոնց հյուլե,
Հա՛ աշխարհային իննեբորդ ալիք
Թող հին մարտիկիս ինձ իր մեջ ձուլե:

Զե՛ վո՛ր չես ես այն մեծ ալիքի
Մի կաթիլն եմ — մի, վոր պիտի ցայտի,
Զե՛ վո՛ր նա վաղուց յերկնած յերկնքի
Ամալի չի զավակ, վոր պիտի պայթի...

1920

ՄԱՐԳԱՐԵ ՅԵՄ ՅԵՍ...

Մարգարե չեմ յես...

Յե՛վ զգո՛ն հոգուս աչքով սրտես
Թափանցում եմ խուլ, հեռավոր վայրեր
Յե՛վ լերկրազնդիս անսահման ծայրեր:

Տեսնում եմ ինչպես լերկու ախոյան —
Թշնամի ուժեր իրար դեմ յեղած՝
Կատաղի թափով իրար կխոյան,
Վոր տիրեն կյանքին, կամ ընկնեն մեռած:

Մի տեղ բուրժուան, վորպես հյուժված կին,
Կուգե յես խել իր փառքը նախկին.
Պատնեշի աչս կողմ ջահել Կոմունար
Կոփում ե նոր կյանք կռելու համար:

Յե՛վ հեղեղի ալես արյուննս ե հոսում,
Վաչ վոք չի՛ ժխտում կովի դողափար.
Տարերքն են ճշում, լեռները խոսում՝
— Ե՛լ վերադարձի չկա ճանապարհ:

Յե՛վ դեռ կավում ե Հերոսութունը
Դահիճների դեմ — աշխարհակալի.
Փողոց ե իջել Արդարութունը,
Իր դատն ե վարում համառ, տիտանի:

Մարգարե չեմ յես... Տեսնում եմ ինչպես
Դարերով ճնշված ստրուկն արթնացած՝
Տիրել ե ուզում աշխարհին համայն.
Ու պիտի տիրի... հալածի ե նրան:

1920

Ահա քաղաքը... հսկա բուրգերի մի դանդաղմած և այն
ԹՅ միապաղաղ պողպատից ձուլված լեռների շարան
Ուր թրամների, հեռախոսների ցանցերը անխոնջ
Շարժի չեն բերում, աղմկում կյանքի յերակները վողջ:

Ահա փողոցը... մեծ, յերկար ու լայն գետի լե նման,
Ուր վոլորտներով ծփում և, յեռում հոսանքը շարժման,
Յեվ ուր վիթխարի շենքերը քարե յերկնահույ շարքով՝
Կապույտ մի ճամպա չկրել են վերից անհուն լալուրքով:

Այստեղ ցուլի պես բառանչում և, տես, կառքը
Ինքնաշարժ,

Այնտեղ աղմկում հանրակառքերը, թրամները վարժ,
Սրանց արանքից ծիծեռնակի պես սուրում են ճարպիկ
Հեծանիվները, շալակն առած կին, տղամարդիկ...

Յեվ այս ամենը, և կառք, և թրամ վազքով խուռններամ,
Հզոր, դյուլթալան գաղտնի մի ձեռքով ալիքանման՝
Պտուկտ են դալիս, վորպես համաչափ թեմպը սլաքի,
Ու չեն խանգարում թանչը քաղաքի, հեքը քաղաքի:

Յեվ դո՛ւ և այստեղ մարդը այսորվան— ուժի ու փառքի,
Վոր այս փորորում ծծում և առողջ հյուսթերը կյանքի,
Ծծում և, քամում լույր ու հրապուլյր, հափրում,
արքենում,

Ու չե՛ հագնում... ու չե՛ հադենում...

Ո՛ր, այս խնճուղքի վոլորտումներին, լույս փողոցների
Հնչուն լերդերին

Անմաս և միայն ստեղծողն այն,
Վոր շուք և տվել նրա վերամբարձ բազմահարկերին,
Ինքը մնացել մոռացված, մենակ, վորպես խորթ դավակ:

Յեվ բանակ զրած քաղաքածայրում, վորպես գոռալիք
Այստեղ ձուլվում և գործարաններում սերունդը գալիք.
Ո՛ր, հետևեցեք նրա փոթորկող սրտի բաբախման,
Նաեւ իր խոհերն, իր հույզերն ունի, իր գեր-նպատակ,
Վորի ծով-թափին չի գլմանալու վնչ մի ամբարտակ...

1911. Փարիզ:

Մ Ե Յ Ֆ Ե Ր Ը

Դրամատան ներքին հարկում մտալ ու դաժան,
Ուր մանկուց սառնությունն է յերեսիդ զարկում,
Այլիկներէ կա պողպատե չորս պատի շարան,
Մահա ու դաժան, մութ, անհամբույր այն ներքին
հարկում:

Պողպատե այն արկղներում վոսկին է դնում,
Հազար միլիոն, միլիոն հազար դեղնազուլն վոսկին.
Ուն քրտինքը, համ արյունն է այնտեղ հեկեկում..
— Ամեն յերկրի բանվոր մարդկանց է ամեն ազգի:

Շահագործող հարուստների թալաններն են այն,
Վոր բերել են դրամատուն պահ տալու այնտեղ.
Անապահով է իրենց տուն—վախ կա գողտանան,
Գողը գողից է վախենում՝ տանը, ամեն տեղ:

Յեւ ամեն ուր խորհրդավոր այս մթին հարկում
Զույգ բանալիքն են զըրնգում—իրար ստուգող.
Գալիս, գնում չերկու սեռից, վոսկու հետ խաղում,
Բերում, տանում, անհետանում—

— Գող՝ ու սիլտը գող...

1916

ՆԵՐՔԻՆ ՀԱՐԿԵՐՈՒՄ

Կանգնել ես. ոհա, ինչպես հսկա բերդ,
Տանիքդ բարձր՝ ամպերին հասած,
Կոխվ ես մղում կայծակների հետ
Յեւ զարձյալ մնում ճակատդ պարզած:

Ամեն մի քարըդ արյուն է ծծել,
Մինչ հասակ առել պատերդ հպարտ.
Ամեն մի աղյուս քրտինքն է թրծել,
Վոր ամուր լինեն կողերդ պողպատ:

Ո՞վ է սնել քեզ, ո՞վ տվել հասակ,
Այն հով քամու հետ կովել բարձունքից.
Ո՞վ դողը սրտում բանել ցրտի տակ,
Թրջվել անձրեկից, սարսըռել բուքից...

Յեւ դո՛ւ, վոր անչափ հյութեր ես լափել,
Ո՞ւն ես շուք տվել քո վերին հարկում..
Իսկ նա, վոր այնքան քրտինք է չափել,
Տես, նկուղներումդ արյուն է թքում...

1911. Բրյուսսել

«ՔԱՂԱՔ» ԿԻՍՍԱՎԱՐՏ ՊՈՅԵՄԻՑ

(Հասկածներ)

1

... Ու հայրս ասաց.

— Գնա, վորդի ջան, աշխատիր դու ել,
Հացը մեր տաշտից վաղուց պակասել՝
Չորթան ել չունենա, թե գլուխ պահենք...
Գնա, վորդի ջան, աշխատիր դու ել...

Ու մայրս ասաց.

— Գնա, անուշ ջան, քանի դու ջահել,
Չեղքումդ կա ուժ, մեջքումդ՝ դվաթ,
Մայանի համար դնա բաժին բեր...
Գնա, անուշ ջան, քանի դու ջահել...
Ու մեջքիս կապած լերկու կորկի ճաթ,
Տրեխս հագիս, դուլադս հավաք՝
Ճամպա ընկա լես դեպի Սև քաղաք...

* *

Դե, քնաք բարով, մեր տուն ու բախչա,
Չեր դարդերից եմ դադարեցուն ընկել.
Նաչար իմ ապին գլուխը չնալած՝
Կող ու բեգառից վիզը բարակել...
Քիրս պառավել տանն ու մնացիլ,
Նախ եծերի կոշտ պտուկները

Ենքան ե հունցել՝

Վոր ցամաքել են նրանք, չորացել...
Դալիս եմ, քնդաք, քո ունեղին ենք
Հիմա մնացել...

Ու մեր Թալիշից յես տեղ եմ հասել,
Ընդեղից դալի Իվանենց տունը.
Այ տղա, սհենց ել շհար եք տեսել.
Նս Դամն ա եսքան հարստութունը...

Դիշերները լուս՝ լուսնգի նման...
Պարախոզները վոնց են լսդ տալիս.
Հենցա մեր բուլիք, մեր դաղը լինեն,
Մեր գեղի գյուղը միտս ա գալիս...

Բա ըսհենց արմացք չհար եք տեսել...
Դիփ նոթ ու մազութ, դիփունք ել սե-սե,
Եստեղ ու ընդեղ մեծ-մեծ դադաններ,
Տափին պըպղած՝ վոնց-վոր դադաններ—

Մինը դըմբում, մեկելը փշշում,
Մինը բարձրանում, մյուսը քաշանում,
Հենցա կորկատի կինդ լինի բանում,
Հենց ես իմանում Թառթառն ա վշշում:

Նս դիփ դաբուլ ա, ընդհունակ ա մեզ,
Ամմա վոր կանաչ ծառ ու խոտ չկա՝
Փիսը հենց ետ ա... ու չգիտեմ յես
Նս հարամ յերկիր ել ընչի՞ յեկա...

Չայից նոթի հոտ, վեննիտ միշտ մազութ,
Նորդն ել ըստեղ յերեսդ ա չանգոտում...
Ավազն ասում ա ամսական տասնութ
Մանիթից ավել ըստեղ չեն առնում:

Ուրեմը ես ԹԻ ԵՆ քաղաքը մեծ,
Վորտեղ քուչեքում, ասում են, վոսկի,
Արծաթ ա թափած... ել սրանից չետ
Ո՞վ կհավատա մարդկանց սուտ խոսքին:

Ուրեմը ես ԹԻ ԵՆ հարուստ Բագուն,
Վորը գովում են մեր Գյուլումասանում.
Այ հարմա ըլի ես տեսակ հացը,
Քիչ ա մնում թե հրեա դա լացա...

III

Սիրելի Թյունի,
Պարտապիրս խնթրեմ ընթունի.
Հենց նոր վերջացավ մեր աշխատանքը,
Ասեցի՝ գրեմ քեզ ես նամակը:
Միայն բեղամաղ չլինես, Թյունի,
Յեթե նամակս փխս գրած լինի.
Գրում եմ չոքած պատկոցնիկին,
Վոր դողդողում ա արագ պտույտից
Մեր մախավիկի:

Ա՛թուն, դիտա թա սա ինչ դազան ԹԻ...
Հարամի՞ սսեմ, թե՞ սատանի չարի...
Դե պատմեմ լսիր ընչի՞ նման ա.
Մեր գեղի ծերին, մեծ դեռի ունի
Տեսի՞լ ես են մեր ճաղացի ակը...
Հենց նրա պես ա մեր մախավիկը...
Միայն նա՛ փետից—
Սա դիփ՝ արկաթից—
Յես ել եղ ական

Գողթին պահապան...:

Դե, ել ինչ գրեմ.

Շատ յերկարացավ

Ես իմ նամակը:

Հա, Զնես ընկավ.

Մեկել դրկում եմ քեզ ինչը մանեթ,

Վոր թոփ եմ արել ես ամսի միջին.

Մեր հարսին տա, թող չհեղափոխ,

Վոր զալս ընկավ ձմեռվա վերջին:

Ասում եմ մի քիչ շոր ու շուրթ առնեմ,

Վոր մեր ապորը քիչ քյոմազ առնեմ.

Դե, մնաս բարով, եկա, քնեցի,

Վոր առավոտը արթնանամ վեցին:

IV

Թյունի, ասեմս չկամ, չորուկ ե տարին...

Յանի դե կանամ ասեմ թե մի կյալ.

Հալընթ պիտի կլաս,—կյալըդ ա բարի.

Ամա իմացիր.

Եստեղ տանա հարս ու աղջիկ չկան,

Վոր ամեն շաբաթ կիրազնամուտին

Վեննեղ լվանան, փոխքդ կըրկատին,

Դրա տեղ ըստեղ մարդիկ շատ շուտով

Խելոքանում են, խելքի ծով դառնում:

Են վոր քուրաչում կրակն ա ծամում

Դամուր-լեղակթը...

Հենց ես խմանում, թե մարդն ել եղպես

Մի խամ յերկաթ ա. թակես՝ կդառնա

Մի բան պետքական—մի նալ, մի գութան:

Կգաս կտեսնես մեր ելեքտրիչներն...

Դիրի մի մավթուլ ա...

Ես մի մավթուլով սաղ են զավոդը

Զբաղվանի պես համ պլպլում ա,

Համ տալիս խողր:

Ախ, թ'յուսնի աղպեր, են յերբ կլինի,

Մեր ողորդաղը իմանա բյուրթուն,

Ես չարիս ու լուսի ուժի զորություն:

V

Են վոր ծեգ-ծեգին՝ առավոտները,

Մեր վերցակները հաբայ են տալիս,

Ենպես ել լոխ մեր սիվիստողները

Նրանց պես ուրախ դուրա են տալիս:

Հազար մի գուդոկ տված ձեն-ձենի—

Հենցա մեր նախրի պառանչը լինի:

Դե, միաս բարով, սիրելի թյուսնի,

Պարովագիրս խնթրեմ ընթուսի.

Եսա վերջացրի իմ աշխատանքը

Բարով ստանաս դու իմ նամակը:

1912

ՄԱՅԻՍ-ՄԵԿՅԱՆ ՅԵՐԳ

Գարնան անդրանիկ այս ուրախ որին

Դուրս յեկեք խումբ-խումբ, բանվոր ընկերներ,

Յեվ վողջույն տալով դաշտ ու ձորե, ին՝

Յերգեք ձեր ազատ, տոնական յերգեր:

Գուռ արձագանքը ձեր հաղթ յերգերի

Թող սաբսափ տգէի թշնամու սրտին,

Թող ցնցի հոգին բռնավորների,

Հանգիստը խլի ճնշող հաբըստին:

Յեվ թող խլանա ձայնը բռնության—

Աղմուկ չլավի զործարաններից.

Այսոր մեր տոնն ե վեհ գիտակցության—

Թող պալթի աղան համառ զալրուլթից:

1906

ՅԵՍ ԱՅՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ...

Են՝ վոր կիսահալ սառույցի տակից
 ժ/ո վտակներն են հե ի հե լողում,
 Են՝ վոր ձյունների վերջին հալոցքից
 Թավիչ աղվամազ կանաչն ե շողում,
 Են՝ վոր արևի կենսատու շողքից
 Գարնան առաջին ծաղիկն ե ծլում
 Յեվ մանուկի պես արթնացած քնից
 Աչիքը ճմլում՝
 Յես այն եմ սիրում:

Մն՝ վոր նայում ես սարերի լանջին
 Պուտերի խումբն ե կարմիրն տալիս,
 Լսում ես ջահել արտերի միջին
 Արտուտի աղատ կանչը թնդալիս
 Յեվ այդ հաղթական ցնծալի կանչին
 Տեսնում ես նորեկ ընկեր-թռչուններ
 Արձազանքում են, տալիս վողջույններ
 Աղատ լիթիրում՝
 Յես այն եմ սիրում:

Մն՝ վոր այդ սրտիդ գոհունակ ժամին
 Տեսնում ես մեկ ել հյուսիսի կողին
 Ծողաց մի փալազ... լետքից ել խրոխտ
 Հեռու ներդաշնակ մի անուշ վորոտ,
 Ուր հողիդ նուշնպես թնդում ե զգում,
 Վոր այդ վորոտից անձրև ե գալու,
 Ողջ մաքրելու ու մեզ բերելու
 Ճանկալի դարուն՝
 Հենց այն եմ սիրում:

1909

— Ապրիլ...

— Ապրիլ միայն կարմիր դարնան,
 Յերբ ջրերն են իրար խառնվում—
 Գետեր դառնում,
 Յերբ կանաչն ե հասակ առնում:
 Փարթամանում.
 Ապրիլ միայն կարմիր դարնան:

— Կովեյ...

— Կովեյ միայն կարմիր դարնան,
 Յերբ վորոտն ե ահեղ թնդում,
 Յերբ կաշծակն ե յերկինք քանդում,
 Կռիվների բացում քառս,—
 Տարերքների խուլ ովկիանոս:

— Մեռնել...

— Մեռնել միայն կարմիր դարնան,
 Յերբ հեղեղն ե լեռներ խոցում,
 Յերբ սելափն ե ուղի բացում,
 Ինչ կա անպետք՝ տանում իր հետ,
 — Մզլած կյանքի ել վնչ մի հետք...

1920

ԿՈՄՈՒՆԱՐԻ ՄԱՀԸ

(Յե. Շամախի-ի հիշատակին)

Ծաղիկներն մի մեծ դաշտ եր—կարմիր-կանաչ,
Վոր փռվել եր աչքիս առաջ.
Տանում էին թաղելու մեր լավ ընկերոջ,
Վոր ընկել եր վառ հասակում ծաղիկ-բողբոջ.
Տխմար ու բուլթ այն դաշնակի
Սև գնդակն եր նրան շանթել...
Այն լերաժողովների հիմնն եր,
Վորդողել եր պարզուն լեթեր.
Յեվ ալ, կարմիր դրոշներով
Ալ շիրիմը պսակի պես շրջապատել:
Հանկարծ լսվեց «Խնտերնացիոնալ»...
Յեվ այդ խրոխտ յերգի միջից
Կարծես ծլեց ջահել մի ձայն,
Նույնքան հաստատ ու համուրուն,
Նույնքան հաստատ ու լերազուն.
Նա ստում եր— նայե՛ք սրա
Վեհ ճակատին... այս թարմ սպին
Հույս և տալիս ինչպես արփին.
Մինչ տմարդի դաշնակն ալն
Կարծել և թե, լեթե զարկեց կոմունարին՝
Սև որ կապեց մեր լույս որին.
Բթամիտը կարծել և թե կյանք սպանեց,
Բալց չիմացավ, վոր մի մահով
Նոր հաղարներ վոտքի հանեց...

Նզովք նրան, հեյ, ընկերներ,
Մարդասպանին արհամարհանք,
Սրան թաղենք և ապա մեր
Անշեղ գծած ճամբով գնանք...
Ու վորոտաց թաղման քայլերդ,
Սրա ճառին հետևեց լերդ.
Տղամարդ, կին-կոմունարներ,
Վառված սրտով, վոնց հրձիգներ,
Շիրմի հողում ցանում էին կովի սերմեր.
Մինչ ալ կարմիր դրոշները
Փոփռալով թեթև քամուց՝
Կարծես նույնպես ճառում էին,
Կարծես նույնպես յերգում էին
Խրոխտ ու վես, խրոխտ ու վես,
Մարդ չեն կորցրել ջահել, կարծես:
Յեվ արևը փայլուն, կայտառ,
Նույնքան կարմիր, նույնքան պայծառ,
Իր յերգովն եր ձուլվել մեզ հետ,
Նա ել կարծես դարձել պոյետ:
Մի-մի բուռ հող ձեռքերս առած՝
Հուռ ծածկեցինք նրա լերես,
Բռան հողով—ծաղիկ ցանած
Ջահիլ-ջիվան կոմունարի դամբարանին՝
Ու... հեռացանք նույնքան լուռ, վես...

1921. Դիլիջան—Սանատուրի:

ԴԱՇՆԱԿԸ ԸՆԿԱՎ...

Դաշնակը ընկավ... և բռնակալի դղակը փլվեց.
Նա՛ վոր յերեսուն և՛ ավել տարի հայ արյուն կլեց,
Նա՛ վոր յերեսուն և՛ ավել տարի չար վոգու նման
Իր շուրջը փռեց մահ ու գերեզման:

Հալածեց թափը Մեծ գափափարի—

Նորեկ Աշխարհի,
Բանտերով ցանցեց նոր սերունդներին

Յերթը վիթխարի,
Ու վերջին ժամին, յերբ մահն եր գգում՝
Ձեռքերը լվաց կարմիր արյունով կոծունարներին:

Դաշնակը ընկավ... տանում ենք հիմա

Նբան թաղելու

Նրա դադաղը շինել ենք ահա

Սև կամարների այն տախտակներից,

Վորի տակե

Յերբեմն դուռդ դաշնակն եր անցնում

Յեվ մահ տարածում...

28 նոյեմբերի, 1920 թ.

ՀԱՐՃԻԿՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ

(Ալլեգորիա)

(Նվիր վրաց մեծշուկիներին)

Հարճիկը մեղի, հանդիպելով մի որ կույսին,
Ասաց. «Աղջի, շատ եմ լսել յես քս մասին.
Սպրում ես մեն, անմատչելի, հպարտի պես,
Շորդ պատռած, ինքդ ել սոված աղքատի պես:

Մինչ ահա, տես, գլխարկ ունիմ չես ջալամի,
Փոքրս միշտ կուշտ, թըռվըում եմ, ինչպես քամի.
Ամենայն որ դվարճանում, ուրախանում,
Ազատ, անհող, բանկետներում, թե դուխանում:

Կրծքիս վոսկին, տես, աչն Ձոնիցն եմ ստացել,
Այս գոհարն ել փախչող Հանսից ինձ մուցել.
Տաճիկ փաշան որ ու գիշեր տարել քեֆի,
Իտալացին դրեստ կարել ինձ շլեֆի»:

Յեվ կույսը մեր պատառխանում ե հարճիկին.
«Դեռ խոսում ես, չես ամաչում, լաչառ դու կին,
Այն թվ լինի, ծախվի քեզ պես ամեն մեկին,
Վոր չունենա և՛ զարդարանք, և՛ հացի գին»:

Յես աղքատ եմ, շորս պատռած, ինքս ել սոված,
Բայց մատներիս կոշտերով եմ ապրել սովրած.
Իմ զրկանքը կվերջանա ախորվանից,
Գոնը, թշվառ, սկսվում ե հենց վաղվանից»:

1920

Դեռ թոթովախոս մի մանուկ ելի
Յեւ յոթ տարեկան անդամ չկայի,
Յերբ ինձ ավանդեց հայրս իմ անուս՝
Մի սրբազան խոսք, և դա եր՝ «Նամուս»:

Դպրոցի շեմքին դեռ վոտք չդրած՝
Դեռ նոր եյի դիրք լիս ձեռքս առած,
Յերբ մորս համբույր թրջեց իմ ճակատ
Ու պատվիրեց ինձ անել միշտ «ղեյրաթ»:

Բայց կարճ ֆիացի ուսումնարանում,
Աղքատի բախտը, դե, լինչ և լինում...
Հորս պատվերով սովորեցի արհեստ,
Սիրեցի նրա վաստակը համեստ:

Յեւ ահա որից լիս,
Յերբ ընկերացա մուրճ ու սալի հետ,
Բերինքը դեմքես ծորում և կաթ-կաթ
Յեւ ինձ հիշեցնում՝ նամուս ու ղեյրաթ,
Նամուս ու ղեյրաթ:

Հետաքրքիր մարդուն մեկը -
Պտույտ գալով շուկայում,
Պահ մի կանգնեց խանութի մոտ
Արծաթագործ վարպետի.
Անհաղ մուրճի զարկերի տակ
Արծաթն եր հեկեկում
Յեւ վարպետի ուժեղ ձեռքում
Գալարվելով՝ տափակվում:

Անցավ մարդը մի ալլ խանութ
Ու կանգ առավ նրա մոտ,
Վոսկերիչն եր թեթև մուրճով
Վոսկին ձեռնում լիսանդոտ.
Նրա փափուկ զարկերի տակ
Համբ, թեթև տնքալով
Փայլ վոսկին եր խուլ հառաչում,
Արտասուքը կուլ տալով:

Թողեց նրան, անցավ մարդը,
Դարբնոցի մոտ կանգ առավ,
Ուր յիրկաթն եր կռանի տակ
Ազմկելով բողոքում.
Հսկա թափով իրար լիսքից
Հարվածելով մեծ մուրճը,
Հորդ արցունքի, շանթի տարափ
Հեղեղում եր իր շուրջը:

Ու անցորդը դարձավ նրան,
 Այսպես հարցրեց յերկաթին.
 «Ասե՛, չեղբայր, է՞ր արժաթը
 Արտասվում է կամացուկ,
 Վռակին՝ քնքռել այդ մետաղը,
 Դիմանում է իր վշտին,
 Մինչ դու — կռպիտ, ու մետաղը —
 Այդպես դժգոհ վիճակից՝
 Ասես ցավդ ուժեղ լինի
 Քնքռել վռակի-արժաթից»:
 — Այն, — ճիշտ է քո ասածը,
 Պատասխանեց յերկաթը,
 Բայց զգում եմ ավելի ցավ,
 Քան վռակին ու արժաթը.
 Մինչդեռ նրանք ձեռնկվում են
 Իրենց ոտալ մետաղից,
 Յես հարվածվում, մղկտում եմ
 Իմ հարազատ յեղբորից.
 Ձկն մի բան այս աշխարհում,
 Աղնիվ պարոն, ցավալից,
 Քանց այն, յերբ մարդ ձեռնկվում է
 Իր սեփական կտորից:

Նոր լուսացած՝ Սանդուխտ նանը
 Ձեն է տալիս ծերուկ ապոր.
 «Ա՛հ, հալ, վեր կաց, եսոր տանը
 Այնուր հունենք վոչ մի հափուտ»:
 Տընքալն քալով ծերուկ ապին
 Քննատեղից վեր է կենում,
 Այրի տոպրակ կռան տակին
 Դեպի շուկան է նա գնում:
 Ու տոպրակը լի կապ բերնից
 Շալակում է, տուն է գալիս,
 Ծերուկ ճակտի խորշումն երեց
 Քրտինքըն է ծոր-թափ տալիս:
 Նանը շտապ կապն է բացում,
 Այլուրն ածում մեծ տաշտի մեջ.
 Թըթխըմորում, խըմոր հունցում,
 Պչուկեր անում, շարում անվերջ:
 Ապա բերում ճախի կապեր
 Թորոն վառում ճըրճըրթալի.
 Մինչդեռ անկյուն քաշված ապեր
 Իր չիրուխին է գոռ տալի:
 Նանը թորնի կողքին նստած,
 Գոգնոց կապած, կրոնեք քըշտած,
 Պյուլն առնում է չերկու ափին
 Ու թափ տալով, զարնում տխափին:
 Բայց ծալ-պլուլը թորնի յալին
 Կըպած մնալ չի կարենում,
 Մեկ էլ տեսար թըրըմփալին
 Մոխրի մեջ է նա գլորվում:

«Վարսըս կտրեմ», նանն ե տսում,
«Հացս, անխ, ձիւ ա ընկել,
Աչքը դուրս գա Մայան աղուն,
Վոր ինձ թորնի հերթից զըրկեց...»:

Ախ ե քաշում, բայց ինչ անի,
Յերկու թորոն ալվան հացեր
Դիւի դարձել են կոնդ-կըտենի,
Քեքինջներն են մեկ մընացեր:

«Աղբաթըդ խեր, ա հայ, լինի,
Չելիր կարող ալլուր բերել,
Բերած ալլուրդ հեկցա լինի
Կորեկ, զարի, զըրղըդալի»:

Քանի ալսպես նանն ե լալիս՝
Ահա վոտի ձայն ե գալիս.
Մոտեցողն ե ժամհար Մոսին,
Փայտը ձեռքին, խուրջինն ուսին:

«— Դորմի Աստոձ, Սանգուխտ նանի,
Ժամը պըրծավ, նոր եմ գալի,
Թաժա հաց բեր Մոսին տանի,
Արքայութլուն հոգուդ լինի»:

Նանն ընտրում ե լավ կըտենին,
Տալիս նբան հոգու բաժին.

«Եսոր ժամ չեմ գընացել յես,
Ե՛րնեկ մեղքից փըրկվեմ եսպես»:

1908

Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

«Նոր առավոտ» պոլիմից

(յերիքորդ մատ)

VII

— Գնանք գործարան...

Բայց լսիր տոեմ, սիրելի ընկեր,

Վոր չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,

Բաղեղ ու խոտեր,

Հավքերի նվազ, գուլ-գուլ աղբուրներ,

Յե՛վ վոչ ալ վարդեր.

Չես տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի

լուսաշաղ ամպեր,

Վոչ ել սիրահար ջահիլ արևի

Կըքոտ համբուլներ.

Այնտեղ ծառի տեղ ցցված են խրոխտ

Յերկաթի սյուներ,

Բաղեղ-խոտի տեղ ցանցերի փշոտ

Պողպատի լարեր,

Գեղախոս թռչնոց յեբգի փոխարեն

Կըլսես այնտեղ

Ճախարակների ռնգալին վորոտ

Յե՛վ խենթ փոկերի համերգը անեղ.

Այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն.

Պաղ աղբուրի տեղ՝ քրտինք ամեն ուր,

Վարդի փոխարեն

Ծորում, քամվում ե արյուն սրտերեն,
 Յեվ շուրջդ բոլոր
 Շփնդ ու ժխճր...
 Կըտեսնես, ինչպես թանձրացած մխով
 Ծխնելուլցները
 Յերկինք են կառչել ազան լերախով
 Մրոտ պնչերը,
 Կարծես հրաշունչ վիշապի նման
 Ուղում են շնչել
 Ու իրենց քարշել
 Անհուն բարձունքից փալլուն աստղերը,
 Վոր նրանց թաղեն մշուշ-ծխի մեջ:
 Կըտեսնես շարված սգավոր ու խեղճ
 Արհեստանոցի աղյուս-պատերը
 Խոնավ ու թաց-թաց,
 Կարծես բանվորի քրտինքով թրջված...

VIII

Յեվ դու կըմանես այն դորձարանի
 Կամարների տակ,
 Վորտեղ չեղում ե թափով աշխատանք,
 Կըտեսնես այնտեղ արհեստանոցի
 Հարազատ դավակ կաղնի-բանվորին,
 Կարծես Բահալը նստել է նրա
 Կորացած միջքին:
 Այն, շատ եմ տեսել նրան, իմ ընկեր,
 Մեացած չերես, ծխի մեջ կորած,
 Ու դեռ հասակը յերեսուն չառած,
 Կամ մեքենան ե ճխլում իր թաթում—
 Վոտքերը փշրում, բազուկը հատում,
 Կամ ալ հեղուկը այրում, փոթոթում...
 Յես տեսա նրան, սիրելի ընկեր,
 Մի մթին գիշեր
 Քուրան եր վառվում, փնչում կատաղած,
 Ամեն անկյունից, վորպես վիշապներ,
 Կարմիր կրակը լեզուներ հանած:
 Ողբ լիզելով լերկաթն եր ծամում—
 Ծուփ-ծուփ շիկանում,
 Յեվ նրա դիմաց դարբինքը կանգնած,
 Ալ բոցի դուխից թափ, յեռանդ առած:
 Զորցած մասներով լերկաթն եր կոտմ
 Յեվ պողպատ մեջքով համառին ծռում,
 Կոտմ ու կովճում...
 Յեվ մինչ մի նոր ձև, մի կյանք չեք տալիս
 Անշունչ մեռադին՝ չեք հանգստանում:
 Յեվ խորհում եյի... անս թե ուր ե
 Զգտում բանվորի ստեղծող վուրին,

Ահա թե ինչու կարմիր ալ գալոյնը
Նա սիրեց այնպէս խանդաղապաբար.
Ու թե՛ն կաթ-կաթ քրտինք եւ ծորում
Մըտ ճակատից,
Բայց ելի մի իր, մի դործ եւ ձուլում
Անշունչ լերկաթից,
Մի դործ հոյակապ,
Վորով կոփվում եւ իր կամքը լերկաթ,
Մնվում ու բովում հավատն անհաղթ:

* * *

Մի ուրիշ անգամ այս տխրանքներն
Յեւ տեսա, ընկեր, մեծ ձուլարանում,
Դուլներ ու ձողեր ձեռքերը առած՝
Ձեռուն հնոցի շուրջը բոլորած՝
Թո՛ղ ելին հալում:
Վազրանն ամենի կարմրել եր, փափկել,
Ուղում եր պալթել...
Յեւ ահա մեկը անվեհերներից
Սուր ձողը ձեռքում
Վազրանի կուրծքն եւ զալուլթով մխում,
Յերակը խալթում.
Կարմիր հալոցքը արյունի նման
Վիժում եւ ուժգին,
Կարծես հոխորտում կլանել նրան՝
Ով վոր խիզախեց վերք տալ իր կրծքին.
Բայց բանվորը քաջ սովոր եւ նրան,
Ծաղրում եւ, հեգնում ջեռուն հեղուկին.
Հալոցքի մեջ եւ սնվել, մեծապէս
Նրա հաղթ հոգին:

IX

Վորպէս հրաքուխի ջեռուն ձուլածո՝
Շիկնած դուլներում հալոցքն եւ յեռում,
Մարդիկ վտանգի հարաշ-հրոցով
Հալոցքը դեպի ձեւերն են բերում.
Ահա հասել են ձեւ-կաղապարին—
Մահ ու դժոխքի այս ճանապարհին՝
Հանկարծ վարպետի խրոխտ հրաման...
Ու մի վալրիյանում տասնյակ բաղուկներ—
Լարված մկանունք, ուռած յերակներ
Դուլն են ծռում դեպ ձեւի բերան,
Կոկորդը թափում հալքը հուրհրան.
Կարմիր հեղուկը հալած չուղունի
Խլրաում եւ խենթ հոսանքի նման.
Բոցեր են լինում կրծքիցը հողի,
Ծծմբահոտից զաղջանում ողը,
Բայց ի՞նչ եւ նայում վիշապի խաղին—
Բալաստը նրան զսպել եւ արդեն:

Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

«Փոքորիկ» պոյեմից

Յերկրորդ մաս

I

Փոթորիկի Յերգոր

Մտն աչտեղ փոթորկելու ձեր սրտերը,
Վրդովելու ձեր անդորրը խաղաղ կյանքի.
Մտն աչտեղ սասանելու փուռ հիմքերը
Ներված ու գարշ ձեր հին շենքի.
Դեհ, վեր կացեք, ով քնած է մեռածի պես,
Ով չէ ուզում, վոր կուլ գնա այս հոսանքին.
Հեհ, վեր կացեք, ով ուշ ռ թափ ունի ինձ պես,
Ով չէ ուզում կյանքը գոհել մեծ փորձանքին...
Լսում եք դուք, ահա աչնոնկ վորոտն է հաս
Իր սուր նիզը լերկրի կրծքին միտում թափով,
Ցատումով լի յերկնած վոգու վրեժն է այս—
Յերկնած ցավով ու սարսափով:
Դեհ, վեր կացեք, ով քնած է մեռածի պես,
Ով չէ ուզում, վոր կուլ գնա այս հոսանքին.
Հեհ, վեր կացեք, ով ուշ ռ թափ ունի ինձ պես
Յեվ ծով-կալոտ՝ աչցի դալու «Նոր Աշխարհին»...

VII

Յեվ հրդեհի պես ողում մոլեցնած
Բողոքի ճիչեր պալթեցին հանկարծ.
— Գործադուլ լինի, թողեք աշխատանք,
Հազար կոկորդից մի ձայնի նման
Պոռացին հուզված:

Յեվ մի վարկյանում ուր հազար ձեռքեր
Ալիքի նման փոթորկում էին,
Ուր հազար մուրճեր ու մեքենաներ
Առյուծի նման հռնդում էին,
Կանգ առան հանկարծ:

«Աշխատանք» կոչված մեծ գործարանի
Սուլիչը խրոխտ, աղաչանշանող
Բաղաքածալրի գործարաններին
Գուժում է բանթող:

Այն հիվ է վռնում և այնքան վողորմ,
Ի՞նչ է պատահել, այն ո՞ւմ են թաղում.
Ո՞ւմ տունը քանդում, ո՞ւմ տունը շինում,
Ո՞վ է ում շանթել...

— Այն գործարանի յերակն է պայթել,
Ժամացույցի պես լարված ու սարքին,
Կյանքը փոթորկող առժամ կանդ առել
Ու տեղի սվել մի ալլ փոթորկի:
Ծխնելույզներն էլ գորշ ծխի միջից
Առաջվա նման հրաբուխ չեն ժայթքում,
Թնդանոթի պես ցցված յերախից
Ել հուր չի պալթում:

Յեվ փոկերը խենթ, սառած, շվարուն,
Փայտե ձողեթի փարվել են վզով,
Թուլացել են մեղկ ու էլ չեն պարում,
Ել չեն մրրկում առաջվա հուլյով.
Վողջը լսել է, վողջը համրացել,
Նման քաղաքին առասպելական,
Ասես քարացել
Ահեղ նզովքից մարգարեական...

Յեւ Մարտիկեղը վորոտի նման
 Թնդաց ողի մեջ,
 Յեւ ողը յերգեց, լերաժշտո թյան
 Ալիքների տակ,
 Յեւ ամեն քնկլիս աչքերը վառված—
 Կարմիր արեգակ—
 Քայլում ենք առաջ...
 Յեւ ուր վտաք դնում՝ մեր վտաքերի տակ
 Ծլում ե կանաչ...
 Յեւ գրոշները ձեռքերիս պարզած—
 Կարմիր փոթորիկ—
 Հրդեհի նման ծփում են հողված
 Ալիք առ ալիք.
 Հողին ձգտում ե դեպ վայրեր ազատ—
 Դեպի հաղթանակ,
 Յեւ թվում այնպես, թե վողջ բնություն՝
 Աղբերակ, գետակ,
 Ձայնակցում են մեզ մարտական հիմնի
 Ալիքների տակ,
 Մեր շուրջը ահեղ, լեւզների հեղեղ...
 Վոչ հեռու այնտեղ
 Ոճը թաղնված գրասենյակում,
 Լսելով թափը նվաճող լերդի՝
 Մոսկում ե, ճնշվում, կծկվում, գալարվում,
 Բայց ուշքի գալով, շաապում դեպի
 Վոստրիկանառուն...
 Ո՛ր, այս նենգ իժից լերբեք չեն վախել

Անվեհեր Միխան, Մելիքն ու Կորան—
 Վորդիքն վտանգի—
 Ողղում են ամբոխն հետեը լեռան
 Ազատ միտինգի.
 Ու այստեղ ե նա՝ Մոսեսը դարբին—
 Յերգը շրթունքին,
 Այստեղ ե նա միշտ, բանվորի նա խիղճ—
 Ամենքի հոգին

ՀԱՏՎԱԾՆԵՐ

«Հավասարություն» պոյեմից

1

Մտե՛լ եմ անա մի նորեկ աշխարհ —
Մտե՛լ եմ սքանչ հեքյաթի դռնով՝
Այստեղ ամեն ինչ նոր է ինձ համար —
Նոր ու կատարյալ իր վեհությունով։

Արե՛ր այստեղ փայլում է թեև
Առաջվան շուքով,

Աստղերը դո՛նար ժպտում, ծիծաղում
Գեղ ու հմայքով՝

Մեր կավոյ գետերն փոթորկող, անեղ,
Մեր անտառները թավավարս, շքեղ,
Թեև խոտում են առաջվան հանդով՝
Բաց կլանքն է ուրիշ, մարդիկը մի ալ
Ու ել վաղեմի չեն նման իրար։

Մի հեքյաթ է այս, տեսիլ աննսման,
Ուր հազար-հազար

Տասնյակ հարկանի տներ ու շենքեր
Նայում են իրար տխառնի նման,
Այստեղ ամեն տուն է ամեն մի շենք
Մի-մի քաղաք է, մեծ ու փառաշեն,
Ամեն մի փողոց՝ ծով համատարած,
Ամեն տանիքի արևը բաղմած...

Հո՛նք քաղաքի հեռածայրերում
Շարեշար, հպարտ, գեղեցիկ, սիրուն
Գործարաններն են վեհապանձ իշխում,

Վերամբարձ գլխով աշտարակներից
Լույսեր են բաշխում։

Հրե՛ն մաքրաշեն ջրերի հուլզեր,
Կանաչ պուրակներ և ծաղկանոցներ,
Ամեն մի շենքի և գործարանի

Փարթամքն են կաղմում։

Յե՛վ մարդիկ այստեղ ամենքն են բանվոր
Յե՛վ աշխատավոր,

Լւր չկան այլևս վոչ միլիոնատեր
Յե՛վ վոչ չքավոր։

Այստեղ ամենքն են ընկեր-բախտավոր,
Իրար հավասար

Յե՛վ մեկը՝ հազար։

IV

Յե՛վ յես հեքյաթի շեմքին խոնարհած՝
Հիբնում եմ լուկ այս նոր աշխարհով.
Մի աշխարհ չքնաղ, վոր ալիք առած՝
Ծփում է, շարժվում, վորպես լեռուն ծով.
— Ե՛լ, հազար, հազար ավտոմոբիլներ,
Վոլ այդպես արագ թռչում եք, սլանում,
Ո՞ւմ եք պատկանում.

— Հսնրապետության...

— Ե՛լ, հազար-հազար լույսեր ելեքտրյան,
Վոր փշերները արեւ եք վառում,

Ո՞ւմ եք պատկանում.

— Հագստարության...

— Յե՛վ դուք, աշխարհի գեղեցկուհիներ —
Հաղթ անհնաճեր ու գործարաններ —

Վոր քար ու հողից բարիք եք ծնում,
Ո՞ւմ եք պատկանում.

— Բանվոր մարդկութան...

— Դուք, նավեր, ջրեր, լեռկաթուղիներ,
Հանքեր ու ցանքեր ազատ աշխարհում,
Ո՞ւմ եք պատկանում.

— Հանճար մարդկության...

— Համալսարաններ, աստղեկայաններ,
Զքնաղ թատրոններ, հանճարի տներ,
Վոր այս հեքլաթի պարծանքն եք կազմում,
Ո՞ւմ եք պատկանում.

— Մեկին, ամենքին իրար հավասար—
Ուր հազարն է մեկ՝ և մեկը հազար:

V

Տեսե՛լ եք արդյոք վաղ արշալուսին
Նորածին կանաչ—ցողը լերեսին,
Կամ ծով-յեթերում լուսաշաղ ամպիւր
Անրիծ, անաղարտ, ինչպես կարապետ,
Կանաչների մեջ և վարդերի մեջ
Յես տեսա այստեղ մի ավան սիրուն,
Բաղաքից հեռու շարեշար անվերջ
Միահարկ տներ—շուրջը վողջ գարուն:
Տները այստեղ բլուրեղից են վողջ,
Հուլիների հեղեղ, արևն ընտանի.
Այստեղ ծլում է մի սերունդ առողջ
Դեղ մանուկների.

Ինչպես միաձև ու պարզ են հաջմամ
Այս գավառները նորեկ աշխարհի,

Յե՛վ ինչպես սիրով և ինչպես ազատ,
Աղջիկ ու տղա իրար հարազատ,
Կարծես ամենքը մի մորից ծնված,
Ոտքում են կալտառ, ծլվլում սրտանց,
Եախանձ, չարութունն ոտար և նրանց.
Յերգում են, վորպես գարնան թռչուններ,
Հոչ վոք նրանցից հոգս ու ցավ չունեն...
Լակայն ինչո՞ւ այս գեղ ծաղկանոցում—
Բնության ծոցում—

Եղ-տեղ փթթել են ծաղիկ հասակներ—
Պատանիների,

Նաղիկ հասակներ, ինչպես պսակներ,
Կը շուք են տալիս դաշտերի միջին
Թավիշ կանաչին.

Ողբ են սոքա, ինչո՞ւ լեն այստեղ,
Այս մանկանց միջին:

— Երեկ աշխարհի ողակներն են այն—
Համերաշխության,

Վ, ամեն անգամ իրենց հմուտությամբ
Ոգեն, աջակցեն դեռ ևս անփորձ

Այս մանուկներին,

Ոգեն, աջակցեն և ուսուցանեն

Մեկը ամենքին,

Վոյայս հասակից մատաղ սրտի մեջ

Հազարարության և Յեղբայրության

Զարգանա վոգին:

Ահա և նրանք՝ գործարանները
 Նոր սերունդների,
 Ահա և նրանք՝ ստեղծողները
 Այս նոր աշխարհի,
 Հովակապ, սիրուն, վողջը ապակյա—
 Լույսերի աղբյուր,
 Հասակը հղկուն, հարթ ճենապակյա,
 Ողբ համասփյուն.
 Մտել եմ նրա կամարե դռնով—
 Նման տաճարի...
 Այստեղ ե ծնվել, այստեղ սավառնում
 Վողջին հանճարի...
 Ահա և նրանք—ճախարակները
 Զուգահեռ շարքով,
 Վորպես տիտաններ՝ մարմար հիմքերին
 Բազմել են կարգով,
 Գործում են թափով, մրրկում արագ,
 Տենդային հեքով
 Յեվ լսելիքդ շուրջ միանվագ
 Հաղթական լերդով:
 Այստեղ չե՛ս լսվում առաջվա նման
 Շոփնդ ու շառաչ,
 Վողջը խոնարվել, վողջը զսպվել է
 Հանճարի առաջ.
 Յեվ մարդու համար մեքենան ահասա
 Մի զսպված դադան,
 Վոր ինչ ուղղութիւն և ինչ ընթացք տաս,
 Կըլսի անձայն:

Ո՛ր, գիտակցութիւն,
 Վոր խենթ մեքենան մինչև իսկ անգամ
 Դարձել է խոհուն ընկերը մարդկանց...
 — Ներդաշնակութիւն,
 Վոր աշխատանքի ժամերին անգամ
 Լարված ջգերին հանգիստ եղնչում:
 — Զորս ժամ աշխատանք,
 Ուր մարդն է խոյում հաղթանքից հաղթանք:
 — Հավասարութիւն,
 Վոր այս համերաշխ աշխատանքներից
 Ոգտվում է համայն հասարակութիւն,
 Ապրում իրենի, ընկերի համար—
 Իրար հավասար,
 Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար:

VII

Բարդ մեքենայի խոնարհ սպասում
 Բանվորն է կանգնել,
 Յեվ հում նյութերից թելեր է հյուսում—
 Զուռների լեռներ.
 Մի բոպե, վայրկյան, մի արագ պտույտ
 Յեվ հուշերը այն
 Այլ մեքենայի տեսնում ես կույտ-կույտ
 Ուսերը լեռան:
 Ճարպիկ մեքենան բերանն է առնում
 Թելերի խուրձեր,
 Ծամում, կլանում և կրծքից հանում
 Պատրաստի գործեր,

Նրա հաբեան մեքենայի ճաղն
 Վրա լե հասնում,
 Յեվ քուլա-քուլա գործվածքը շարմաղ
 Մալում ու դարսում.
 Մալում, փաթաթում քաթանի հակեր
 Պողպատ մատներով
 Յեր շտապ հասցնում ալլ բաժանմունքներ
 Վազոնետներով...
 Այստեղ ե ահա, վոր կյանք ե առել
 Մի ուրիշ աշխարհ,
 Գործում են հազար ժիր մեքենաներ—
 Մեղունների շարք.
 Յեվ ամեն մեկը ճերմակեղենի
 Մի մասն ե ձևում,
 Կարում ու հարթում խելացի, զգաստ
 Ու՛ գործը պատրաստ:
 Յեվ աշխատանքը, վոր բեռ եր առաջ,
 Զրկանք ու տանջանք՝
 Այժմ դարձել ե նոր մարդու համար
 Հոգու զվարճանք.
 Մարդ ու մեքենա սիրով համերաշխ
 Գործում են ուրախ,
 Կռում ու կոփում նոր սերունդներին
 Ապագան չքնաղ...
 Յեվ այս ամենը դարձել իրենի—
 Ընկերի համար—
 Իրար հավասար,
 Ուր հազարն ե մեկ ե մեկը՝ հազար:

Վողջճւյն ձեզ, վողջճւյն, նորեկ աշխարհի
 Ազատ զավակներ,
 Վոր դարեր, դարեր ձեր մեծ հալքերի
 Հաբատե ջանքեր
 Այսոր պսակվեց վսեմ գործերի
 Վեհ հաղթանակով,
 Յեվ այժմ դիտեք անցյալը հիշել
 Անուշ պարծանքով:
 Վողջճւյն ձեզ, վողջճւյն, յերջանիկ դարի
 Անխոնջ զավակներ,
 Վոր հաղթ ու անդարձ այս մեծ որերի
 Տերերն եք դարձել:
 Իմ վառ խոհերին մարմնացում տվող,
 Հերոսներ կարող,
 Ձեզ հազար վողջճւյն, վոր կյանքին մեր այս
 Շնչեցիք իմաստ,
 Յեվ մարդն այսոր ազատ ու տիրող
 Ձե հախկին գրաստ:
 Ու ձեզ ել վողջճւյն, կարմիր որերի
 Հրդեհի կայծեր,
 Վոր ձեր մեծ ճամբի խաթերը այբած
 Յեվ ընդմիջտ անդարձ՝
 Մի վեհ, փառավոր ուղի յեք անցել:

(Նախերգանք)

Յեկեկ եմ...

Յեկեկ եմ, վոր մի շնչում յերգեմ լերդդ աչն զիւհնչուն,
 Վոր ձուլեցին պոչեւոնեղդ յոթհարյուր յոթ որվս
 միջում:

Յեկեկ եմ, վոր վողջուռեմ աչն վայրերին քո սիրասուն,
 Ուր դարերով լերբեմն միայն ծղրիղներն եյին խոսում:

Յեկեկ եմ...

Յեկեկ եմ համբույր տալու աչն յերաշտած կոշտ հողերիդ,
 Վորոնց միջից առատորեն կաթ ու մեղր ե այսոր
 հոսում:

Դու, Շիր-Կանալ, վոր հազարանց քրտինքների միջից
 բսար,

Նրանց քրտինք գետեր շինած դարձար խորհուրդն
 աշխատանքի,

Դու, վոր հազար հազարների քլունգների յերգը լսած՝
 Առատության հիմքը շուրթիդ հիմք ես դնում մի նոր
 կյանքի՝

Մեծ վողջույնի և հրճմանքի յերգն եմ բերում քո
 դաշտերին

Յեկ հիացմունք բոլոր ազգի, բոլոր լերկրի պոչեւոնեղդ:

Ահա և կյանքը աչն կարոտալից,
 Վոր թվում եր ինձ հեռու մի յերազ.
 Նա, վոր յեթերի անչուս թելերից
 Իր ձեռքն եր մեկնում և մնում անհաս՝
 — Իրականություն, իրականություն...
 Սիրել եմ կյանքը յես առաջներում,
 Նրա մրրկող թափը յերկրալին,
 Սիրել եմ նրա ուզին դժվարին
 Ու յերգել անվերջ իմ հին յերգերում:
 Սիրում եմ ահա կյանքը այսորվա
 Իրա հաղթանքով, իրա պարծանքով,
 Հավերժը նրա, խինդը առույց,
 Սիրում եմ նրա վեհ գեղեցկություն,
 Նրա դրոշը կարմիր, փողփողուն,
 Վոր բերեց այսոր մեզ արդարություն,
 Հավասարություն և յեղբայրություն:
 Սիրում եմ կյանքը, սիրում եմ այնպես,
 Ինչպես նորահարսն իր փեսացուին,
 Ինչպես ծաղիկը արևի շողին,
 Ինչպես անձրևը յերաշտած հողին.
 Սիրում եմ... և, մի, մեռնել չեմ ուզում.
 Չե՞ վոր նա, կյանքը, մի անուշ հուզում,
 Դեռ այնքան կոխվ, փոթորիկ ունի...
 Բայց թե մեռնեմ եր, եհ, այդ ի՞նչ վնաս,
 Չե՞ վոր յես ևս մի հյուլի, յերազ,
 Մյս նոր աշխարհին իմ լուսման տրվի,
 Յեղբորս համար, ընկերիս համար
 Իրօր հավասար—
 Ուր հաղարն ե մեկ և մեկը՝ հազար:

20 գեկտեմբերի, 1916.

31 հունվարի, 1917:

Բայլշեիկ և Շիր-Կանալը—մի առհասարակ

հեքլաթային,

Շուրթը նրա ջուր և խմում պաղ աղունքիցն

Արփաչայի.

Գլուխը հաղթ թաղել և խոր կանաչագույն, դուլալ
գետում,

Պոչը հեռու կապսի ծոցում, ալիքներ և հեռուն նետում:

Մեծ ու մեծ և Շիր-Կանալը, կամարած, գեղեցկաթով.

Փաթաթվել և, վոնց և գրկել Շիրահաբթը լերկու
թաթով.

Մի խանդավառ կարոտ ունի, են ծարավը սիրած լարի,

Վոր կարծես թե սեր ու խանդի կարոտել և հազար
տարի:

Հսկյալը ունի սրտի խորքում խորհրդավոր իր

հորձանքով,

Վող իրանքը դողունքի մեջ—ապրումների մի կրքոտ
ծով.

Յեվ ամենքին իր յերթի մեջ ում տեսնում և ու

ճանաչում:

Խոխոջումով, լսում ես մեկ, ավետում և՛ վողջոյն,

վողջոյն...

II

Բայլշեիկ և Շիր-Կանալը... այն վայրերը լերկ

ու բարբառ,

Վորոնք իրենց ծնված որից այրի ելին—մերկ-անապատ՝

Այսորից հետ հագնելու լեն սիրակարոտ հարսերի պես

Ջուր-զարդարված խառ ու կանաչ, թավիշ, մետաքս,

զառ ու զարբար:

Մի հմայող վստիտումով, արծաթափայլ գրավչութամբ

Հիմա հեռու հեռուներն են ձգվել ցանցերն Շիր-Կանալի.

Այնպես գրկել, այնպես ծծում հողի շուրթը

ազահութամբ,

Վոր կասես թե հողն և տնքում պինդ համբույրից

սիրահարի:

Վոչ մի թիզ հող, վոչ մի ավան և վոչ մի գյուղ

խոչկանդ դաշտից

Ջգում ես վոր չի տանջվելու այսուհետև բարկ լերաշտից:

Բայլշեիկ և Շիր-Կանալը, հոգսը քաշող ամեն մարդի,

Մեծահոգի, ներողամիտ՝ բարեկամի ու տմարդի:

Բայլըհիկ ե Շիր-Կանալը... Դարու զավակ այս
հերոսին,
Մեր այս դարու հարագատին ով չի տեսել՝ թող զա
տեսնի.
Միլիոնավոր պաշտօնյունների, հարձակումի ականներով,
Արփաշալի ժեռ ավերին զրոհ տվող ուսաներով,
Դիրքերից—գիրք, նվաճումներ, մի թոննելը զոգող
մյուսին,
Աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին.—
Ուր ձեռք մեկնես՝ այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ
թող կանաչի,
Ուր լեքեաս, ուր ել հասնես՝ մի հոր սերունդ այնտեղ
աճի.
Ով ծառավե՞լ թող հագեհա, ով յարամազ՝ թող կշտանա...
Այսպես ե մեր Շիր-Կանալը, մի գյուղացի ողուլ ե նա
Յեվ դարդիման, և՛ սրտաբուխ, և՛ լայնաշուրթ, և՛
հյուրասեր—
Բեփը տեղը, լերդը բերնին, խոսքը շուրթին, լիստատ
սեր:

Բայլըհիկ ե Շիր-Կանալը... և գյուղերը գերկն
առած՝
Ցանցել ե իր արյունատար լերակներով համատարած.
Մեկը պիտի հազարների մասին հոգա—մի զեկավար—
Հազարները խանգով վառված պիտի հոգան մեկի
համար...
Հրեն Կապսը սարին կանգնած հովվականչի ձեն ե
տալիս,
Թե՛ հեյ, լսեք, հրես ջրիս ձենն ե գտլիս, ձեզ ե
գալիս...
Կանգ ե առել Պոլիգոնը ե սիրահար էռկսի նման
Քրքջում ե ու սպասում, վոր գան գրկեն, սիրեն իրան.
Անհամբեր ե Որթաբլիսան, բարախում ե սիրաը նրա,
Ցնծությունից շունչը պահած քիչ ե մնում ճչա, պոռա.
Յերազում ե Թոփառվան, աչքով անում Դոնախրանին,
Հասկանում ե Հաջի-Նադար ու կանչ անում հարևանին:

Այսպես մեկը ձենում մյուսին, ավետում ե հեռու տեղից—
Դյուղաքյանդը՝ Բափանակին, Թոփգոյադը՝ Իլխիաբին.
Այսպես մեկը անա մյուսին ավետում ե լերկու վերստից,
Թե գալիս ե Շիր-Կանալը—Բայլըհիկը Հայաստանի:

Ուրիշ փահմ ու սամթ ել ունի մեր բայլշեիկ
 Շիր-Կանալը.
 Նա Շիր-Դաշտի մեջքը գրկած Կապսի մոտից, ինչպես
 նալը,
 Զըրնկեցով նորից պիտի թափվի ծոցը Արփաչայի,
 Վոր պալքարի միջից խլի ուժը հիզրո-ֆիկացիալի:
 Յերգիչներեից վճր մեծն եր աշն, վոր յերգել է ուժի
 մասին,
 Շիր-Կանալը փրփուր խասով շիր-առյուծ է, բաշը՝
 լուսին.
 Լույս թեերի փաղաքշանքով պիտի ցանցի վողջ
 գյուղերին
 Յով զինամոն կայծակ-փնջով ալրի նիրհը մութ
 հյուղերի.
 Պիտի տեսնեն, վոր լուսաշաղ աստղները ելեքտրոնի
 Միտք է ցնցում, գյուղին ասում, վոր անելիք ինքն
 ել ունի.
 Շիր-Կանալը շիրի նման հռչակացող մի պատանի—
 Ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաստանի:

Մեր բայլշեիկ Շիր-Կանալը ուրիշ փահմ ու սամթ
 ել ունի.
 Ձիավարի սանձը ձեռքին հսկա ուժով ելեքտրոնի
 Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու Փաբրիկներ,
 Զբաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր:
 Այն յերկիրը, վոր դարերով քարացել էր ու ցամաքել՝
 Այսորից լետ պիտի յերգի աշխատանքի հզոր յերգի:
 Շատ է լացել համը լացով Շիրակը իր դարդի մասին,
 Իսկ այսորից նա լի թոքով թող ամենից բարձր խոսի:
 Շատ է տանջվել ու տոկացել անհաբաղատ մարդոց
 ձեռքին,
 Իսկ այսորից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին:
 Ու կտանջվեր նա ել նորից, թե չծնվեր հաղթ պատանին,
 Թե չհասներ Շիր-Կանալը—բայլշեիկը Հայաստանի:

(Վ ե ր ջ ա ր ա ն)

Մատաղ լինեմ յես այն որին, մատաղ լինեմ յես
այն ժամին,
Յերբ ինձ նորից կըվիճակվի ալցի դալու Շիր-Կանալին.
Տեսա նրա յերկունքը յես, օրեդումները տարի առաջ,
Այժմ նրա բաղ ու բաղչին, արտն ու հանդը, ծառ ու
կանաչ:
Վիլլանների թավուտ անտառ, ծառուղիներ-
ծաղկանոցներ,
Վորոնց բույրից կըզգա նորից ջահելություն հասակ
ծեր.
Յե՛վ գիշերը հազարաչա տարածելով լուսի փշեր՝
Ինձ կերեա հեռու տեղից մի աստղազարդ հեքյաթ
գիշեր.
Յե՛վ կըսուլեն Փաբրիկների գուղոկները ուրախ կանչով,
Վոզմունելով դուռ ու քաղաք ալ բոցերի հուր
ճաճանչով:
Բայլեհիկ ե Շիր-Կանալը՝ մեծ դավակը Հայաստանի,
Նրա վարդին ջահը ձեռքին լուսի աղբյուր մի տխտանի:
1924, հոկտեմբեր.

ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՊՈԵՄ-ԻՑ

(Հասկածներ)

1

Իսա'կի

Մարմարաշեն կուռ պատերով ու սյուներով հողանի
Կանգնել ե նա—գուռ Իսակին—ժառա պահակը կրոնի.
Ամեն սյունը նրա տխտան՝ գրանիտե մի կոթող,
Ամեն ճակատ մետաղածույլ Հորիելեֆներ են դուրթող:

Թե բարձրահաս նրա տանիք ու գմբեթը վերա՛րարձ,
Կհասկանաս թե քանիսի՛ նյութել ե նա մահ ու լաց.
Ու կսոսկաս վողջ ելությամբ, ու կժայթքի սիրտդ թուփն,
Վոր իմանաս հիմնարկումի նրա յեղեռն պատմություն:

Ասում են թե տեղը նրա հազար դարուց ել առաջ
Ծանծաղուտի, ճահիճների յեղել ե վայր մի անառց,
Ու Պյոտրը ցար խենթ ու խելառ իր քմայքով անարկու
Կամեցել ե այստեղ դառնալ մեծ տաճարին հիմնարկու:

Անծայր յերկրի վողջ ծալքերին տվել ե խիստ հրաման,
Վոր աշխատող ձեռք ուղարկի ամեն մի դյուղ ու ավան ..
Ու թափվել են այստեղ ճորտեր, ճիմք են փորում,
հողը թաց

Բայց ճահիճը թաց ե ու թաց, յերախը լիճ, աչքը բաց:

«— Վոր այդպես ե, թող գերանը աչքդ հանի
անդգամ...»—

Ասում ե ցար Պյոտրը համառ ու կատաղում այս անգամ:

Գերանների անտառներ ե սրի քաշում անխնա,
Բերում մխում հունը նրա, վոր ճահիճը հորանա.
Բայց ճահիճը թաց ե ու թաց, յերախը լիճ մեծացած՝
Ջուրը յեկել ու խեղդել ե արանքները նրա բաց:

Պետրոսյան վարդապետ

Վորպես մի բիծ սև անցյալի—վոճիրների կառավարողուն
Պաղ ջրերում պաղ նեվալի դարանել է վոխը սրտում.
Ո՞վ է տվել նրան այնքան վրիժառու դաժանի դեմք,
Վեր սատրապը, աչքն վեր արքան... ելի Պյոտրը,
կատաղի դե:

Ու կանգնել է դահլճի պես Բաստիոնը բանտարկումի,
Ճակատին ել ցցել մի սուր—նշանաբան գլխատումի.
Կարծես լաբված ձիգ աղեղից վեր խոցացող հսկա մի նետ,
Վոր թռչում է դեպի յերկինք ու ամպերում կորչում
անհետ:

Ու հսկում է ժանդարմի պես աչքը հառած են մյուս
ափին

Ուր Պալատն է ձմեռային—ցարերի վորջն աչքն սարսափի.
Վայ թե ազատ միտքը ճախրող խռովարկու վոգիների
Մութ արևին ժանդ ցարերի մի աղետ կամ փորձանք
բերի:

Պետրոսյան վարդապետ, դու նման ես հսկա գանգի, մուխ
գիշերով
Քո փոս ընկած խոռոչներով—քո արնակալ հուր
աչքերով

Ամեն խուցղճարե դադաղ, կամբարհուպ մի դամբարան,
Ամեն սլուզդ ժանդարմների ու ցարերի լոկ հենարան:

«—Յեթե, ճահիճ, քեզ դեռ քիչ են պերանները
անտառի,

Թող վորկորդ հիմա փակի վոսկորները մարդկային...»
Ու մարդիկ են նորից փառում մինչև կոկորդ ջրի մեջ
Ու ալստեղ ել շերիմ դռնում հազարները ջրահեղձ:

Ու դոցվում է աչքը ագահ ու ճահիճն է ցամաքել,
Չէ վոր այնքան դիակներ է նա կլանել ու հագել:

Ո՛ր, Իսակի, հիմքդ անտակ ու անհատակ լերախով
Ամրացել է բանվոր մարդկանց արյան թանձր շողախով.
Այժմ ձայնը նրանց արյան, վորպես նշան բողոքի,
Արձազանքով անդրյեղկրյան կասսանի քո հոգին:
Դրա համար դու որեցոր իջնում ես խոր դեպի ցած,
Յերբ լսում ես անեծք ու լաց հազարների մահացած.
Դրա համար յես առում եմ. պիտ խորտակվես դու
անհետ,

Քեզ չի ողնի վոչ մի Պյոտր... ու կրոնն ել նրա հետ...

Այստեղ քարի քո վանդակում կարոտ լույսի,
 ազատութեան.
 Թառամեցին ծաղկահասակ Չերնըշևսկի և Նալբանդյան.
 Ու քանիսը խելագարված մոնչացին առյուծի պես
 Թուլն ըմպեցին ու կախվեցին... ու մարեցին ճրագի պես:
 Յեվ իզուր չեր, վեր Ավրորան հենց առաջին ազատ
 որին
 Պատերիդ տակ ճայթեց ուռմբեր ու վողջուհեց
 Հոկոտեմբերին:
 Պետրոպավլովսկ!
 Այդ խառցած մեր վրեժն եր ընդդեմ քո բյուր
 վոճիրների
 Այդ կուտակված մեր ցասումի մահաղուժը՝ զահիճներին:

Զմեռային պալատ

Զմեռային դու գո՛ւ պալատ, վոր ձգվել ես այդպես հը-
 պարտ,
 Վոր գիշատիչ արծիվի պես թևերդ դորշ փռել ազատ՝
 Բո փառքը չե, վոր պիտ չեբզեմ, վո՛չ ել շուքդ յես
 գովեբզեմ,
 Այլ անցածդ ճանապարհը, ահա սլտի նշավակեմ:
 Մափառունակ, գո՛ռո՛ղ պալատ,
 Դո ծոցում ել թուլն ես շնչել քանի՜ դավեր, քանի՜
 վոճիր,
 Եինչ վոր վերջին շունչը փչեր Նիկոլայը տխմար վեր-
 ջին.
 Ու քանի՜ վե՛հ կտրիճների հանել ես դու մահավճիռ,
 Քանի՜ լուսե մաքի ջահեր հանգել են քո լոկ մի շնչից.
 Նրանք, վորոնք պատվով տարել դրոշը մեծ գաղափարի,
 Նրանք, վորոնք գոհեր շարել ազատութեան ճանապարհ-
 հին.
 Յեվ Ռըլեն, և՛ Կախովսկի, և՛ Մուրավյով — Ապոստոլն
 այն,
 Վորոնք ընկան փտած թոկից հրապարակում լայն Մե-
 նատի —
 Յերբ Նիկոլայ առաջինը դարանակալ վագրի նման
 Պատերիդ տակ մոնչալով գողը բռնած տվավ հրաման՝
 — «Դեկտեմբերյան ցնդվածներին ի կախադան տանել
 դատի...»
 ՄԷ վոճիրն եր, քո առաջին, Ռոմանների դու գարշ
 պալատ.

Սա չեւ զարձալ փառքը վերջին քո տերերի նախկին
 անպարտ,
 Յերբ հիմքիդ տակ արշուճաններկ սալերն անգամ զբա-
 նխտե
 Մուրափովի հետ միասին հառաչեցին ու ասացին —
 — «Դժբախտ չեբկեր, խեղճ Ռոստին, վոր կախելն իսկ
 կարգին չգիտե...»
 Վերջին նախճիր ու վոճիրդ վոճիրների մեջ բյուրեւ-
 վոր —
 Այդ հինգ թիմն եր, դաժան պալատ, հունար իննը —
 սոսկումի սբ,
 Յերբ նիկուլաւ-արշուճաբրուն չեբեցալ պատշգամբիդ
 Ու արնաշերտ մի գիծ թողեց — վերջին գիծը անցած
 ճամբիդ.
 Յերբ Պուտիլով հացի համար վտարդ լեւալ... իսկ ցա-
 բըն անգութ
 Յորենի տեղ «ըմբոստներին» արճիճների մաղեց կաբ-
 կուտ...
 Բայց և այդ նույն պատշգամբեն մաղթանքներով
 ճամբեց սազմի
 Բոլոր նրանց, վորոնք յեկան են սև տաբին պատե-
 րադմի:
 Վոճիրների դու վորջ պալատ, մի տեղ՝ դնդակ, մյուս
 տեղ՝ որճնանք,
 Սրտումդ՝ ահ... ու ծոցիդ մահ... հիշատակիդ արգա-
 հատանք...

Այսպես ահա յերեք ճիւղադ, յերեք հրեշ ու բռնակալ
 Չեռք ու մեջքով — հենակ ողակ — Բոբասն նեցուկ ա-
 րած իբար՝
 Մեկը Դրակոն, մյուսը՝ Յերբեր, իսկ չեբբորդը — Ափ-
 յանի թուլն — *)
 Գիշեր-ցերեկ մահ են նյութել, — մի համեմաշխ չեբբոր-
 դություն —
 Վոր հանդցնեն խավար շնչով ինչքան լույս կար են
 մեծ չեբկրում,
 Ինչքան կրակ ազնիւ ու վեհ խոսվարկու հուր սրտե-
 րում...
 Ահա ինչու մեծ նեվալի մրմուռ ջրերն տխուր, վրդով
 Թախծում են միշտ ու մրմնջում մեծ հանճարի են մեծ
 սրտով.
 Ահա ինչու նրա-ափից ազատ յերգով ու բեբկրանքով
 Պուտիլովը կրակ ժայթքեց հուր աչքերից հոխորտան-
 քով:
 Յեւ պալատը Ռոմանների, ուր տիրում եր մահ ու շի-
 բիմ,
 Այդ որվանից դասակարգի զարձալ մուգեյն հավատա-
 բիմ,
 Յեւ պալատը, վոր թնդում եր կտխաղանի դատավճիռ,
 Այսօր խրոխտ իր ճակատին կրում և հաղթ զրոշ կար-
 միր:

*) Հեղինակն աղնարկում և Իսակի տաճարը, Պետրոպովկայի
 և Չմեռալին պալատը, վորպես կրոնի, ցարիզմի և բռնության
 սիմվոլներ:

ՊՈԼՏԻՆՈՎԿԱ

Յեզ հուրերի ու բույրերի
Միջից ծնավ մի զործարան—
Պուտիլովկա-կարմիր հսկա—
Կարմիր անուր տվին նրան:

Հ. Հ.

Պուտիլովկա, կարմիր հսկա—վոր զարուց անց մի
կյանք ունես,
Ծեր պոչետից պրոլետարի ջերմ վողջունս պիտ ընդու-
նես.

Վողջուն անցած ճանապարհիդ—հաղարների արնով
ներկված,
Փառք ու պսակ հաղթ աչտորիդ—պոչետների գովքում
յերգված:

Պետրոպավլովսկ, Իսակիի ու Պալատի դեմ հանդիման
Ինչպես խրոխտ հին բալլետիկ կանգնել ես դու սարի
նման.

Գիրկդ առել աշխատանքի հերոսներին հաղարաշատ,
Ամեն մեկը մի-մի տիտան պողպատաձուլ խիզախ
ուժատ:

Հեովից խաղաղ քաղաք ես մի—վրադ չգարչ մշուշա-
պատ,
Կարծես մի սար մոխիր հազած, կամ թե ձյունած մի
անապատ.

Մինչ սրտիդ մեջ քանի՜ կռիվ, թագնված հուր կա խը-
լրաուն—

Աշխատավոր հաղթ բանակի, խենթ հողմերի մի պատ-
մուկյուն...

Ծխերիդ մեջ հուր ու ժխոր հոնդում ես առյուծի պես,
Մշուշներդ են լերեքին միշտ ծառացել խեղդել կարծես.
Մոնչում են մարդ, մեքենա, մրցում են կիրք, պաշքար
ու տենչ,

Ո՞վ-ում արդյոք պիտի հաղթի այս անուկի քառսի մեջ:

Յերկնած ամպերդ են վորոտում, թե՞ կայծակներ
մեջդ ճալթում.

Կապար—յերկկնքն ե այն պալթում, հրաբուխներից լա-
վա ժալթում.

Շողիների—ոձի ֆշշոց, հաղթ մուրճերի ծանր տնքոց,
Թե՞ բակերումդ գետի վշշոց, հեղեղների թափ ու շփոց...

— Այդ ցասումի ու զալրույթի քո լեզուն ե այնպես
կերտում

Յերկաթների կուռ բառբառով վրեժ ու վոխ քո մեծ
սրտում...

Ու ճնշումը են բոնակալ ժանդ Յերեքի ել չտարար,
Յեզ մի գիշեր բոցերիդ մեջ յերեսդ վառ ալմու-ալմու՜

Ռումբեր վառած, կամքդ լարած կրակների միջից լե-
լար,

Յեզ մոնչաց անազանդիդ շեփորը հաղթ—ցնցող աշ-
խարհ...

Ու ումբերի սիմֆոնի մեջ ծնվեց մի վեհ սքանչ պո-
չեմ.

Հե՛լ, ընկերներ, հիմա թողեք իմ յերգերում նրան գո-
վեմ:

1929. Մոսկվա

Մեղունների փեթակ է նա—
 Ժխորալից խուլ աղմուկով,
 Թե խոխոջող գետնի է նա—
 Լեռնաղբջուրի խիզախ լերգով:

Մտել եմ յես նրա դռնով—
 Զուգահեռ շարք— Ժիր մեքենայք,
 Ուրախ զվարթ պողպատ կռնով
 Աշխատում են ալստեղ կանայք:

Զարածձի իլիկների
 Վերորտները մեղմ, նրբահյուս,
 Բարամայի թելիկների
 Վիլանները արեգնալույս՝

Կարծես խմբով չերգում են ինձ
 Իրենց հիմքը հերոսական՝
 — «Մտեցձում ենք այս թելերից
 Մետաքսագործ մեր աղագան»:

«Այս թելերից խեղդող պարան
 Մենք հյուսում ենք մեր թշնամուն.
 Դե, այդպես է մեր գործարան—
 Պատանք նյութող չառ հարսմունք...»:

1928, Ստեփանակերտ.

Յե՛մ մի հասարակ ֆաբրիկային եմ
 Ես մեր զավույթը հաճառ կսիրեմ.
 Վոչ հեր եմ տեսել, վոչ ել մոր լերես,
 Թե ասես վորք եմ... եղ ել կներես:

Իմ ծնող հերը—տեքստիլ գործարան,
 Ինձ բերող մերը—նախշուն մեքենան.
 Իմ լեղբայրները մի մեծ ողուշաղ
 Յեվ քուլրերիս հետ ավաղ մեր ոջախ:

Մեր տունը հենցա հարսանիքի տուն
 Ամեն ոք աղմուկ, յերգ, ուրախութուն.
 Մեր իլիկները՝ մի-մի նվագաբան,
 Մի-մի դաշնամուր, մի-մի լերգարան:

Գոհ եմ, դժգոհ չեմ մեր ես նոր տանից,
 Տեքստիլին ինձ համար մի նոր ընտանիք.
 Յես աշխատում եմ նոր կլանքի համար
 Թող լինի նրան իմ լուսան հալար:

Դե՛, մի հասարակ ֆաբրիկային եմ,
 Ես մեր զավույթը հաճառ կսիրեմ.
 Վոչ հեր եմ տեսել, վոչ ել մոր լերես,
 Ամմա թե վորք եմ... եղ ել կներես:

1926. Էջնիսական

ՁՈՐԱԳԵՍՈՒՄ

Ախորժալուր ձենիդ մատաղ,
 Ձորագետի ուրախ դիզել.
 Զվարթ լերգիցդ ուրախանում
 Ու հրճվում եմ, ահա, յիս ել:

Մի ժամանակ ես ձորերում
 Հովվի շվին եր շընգշնգում.
 Հիմա թնդուն գուդսկդ ե
 Այս վայրերի մեջ զբնգում:

Մի ժամանակ ես սարերին
 Սոված գալերն ելին վռնում.
 Հիմա նրանց ծմակներին
 Հազարաչյա լույսեր վառվում:

Ուժ ես տալիս Ձորագետի
 Շենք ու շնորք-բեռոններին,
 Կուչ ե գալիս ու գալարվում
 Քո լույսերից մեր թշնամին:

Ու եզուց ել յերբ կավարտես
 Գետադոտին վոսկե շքեղ՝
 Ձորագետից քեզ կուդարկեն
 Աշխատելու մի ուրիշ տեղ:

Կլկլացող ձենիդ մատաղ,
 Ձորագետի լերգիչ, դիզել.
 Հաղթանքներիդ ուրախանում,
 Ծափ եմ տալիս չես ել, չես ել...

1930. Ձորագետ

ԱՃՈՒՄ ԵՆՔ...

(Խ. Հայաստանի աստնամյակին նվեր)

Հիմա մեր լերկրում բոստանների տեղ
 ագարակներ կան,
 Յեվ Շուշիկի տեղ՝ կոմլերիտահիթ—
 կարմիր գլխարկով.
 Այնտեղ ե հիմա աճում ու ծաղկում
 մեր յուզ ապագան—
 Առատաբերող կոլխոզնիկների
 կայծակե կամքով:

Մեր լերկրում հիմա ցանքը բամբակի
 ու ճակնդեղի
 Լեզու յեն տուր, ճառում են խրոխտ
 մեր բերքի մասին.
 Յեվ սովխոզները շուրջը բոլորած
 քաղաքի, գյուղի՝
 Արև են վառել սոցիալիստական
 նոր արշալույսի:

*
*
*

Հիմա մեր լերկրում տախտակի, գլխի
լուչըն և դեռ բուրում,
Ուր իբար հետքից, ֆարքիկներ, տներ
աճում են շարքով:

Ուր Չորագետը Լոռու սարերի
կատարն և քերում
Իբա առյուծի բետոնի զանգված
Թռիչք խոյան քով:

Մեծ և աճը մեր, ու հեքյաթալին —
դարեր չեն տեսած

Ու դարերով չե, վոր աճում և մեր
աճը հաղթական.

Մեր հերոսները խանդավառության
արբույնքին հասած՝

Իրենց ջղերից հլուսում են աչքակա
մեր լույս ապագան

29 XI— 1930

ԻՄ ԿՏԱԿԸ

1

Ծածկող քարը իմ շերիմի
Թող զնդանի նման լինի.
Պատվանդանի վրա գրած
Թիվ ու անուն Հակոբյանի:

Յեղ գրիչս այս կուռ սալին
Կռանի տեղ թող լուռ հանգչի.
Չե՞ վոր լեռ եմ, վոր առաջին
Անգամ գրչով սալին զարկի:

Գրիչը մուրճ, կյանքը զնդան,
Վողջն իմ կովի նշանաբան.
Թող ուրեմն մահիցս հետո
Նա դարգարի իմ դամբարան:

1920

Յես վոր մեռնեմ՝ իմ շիրիմին մի քար դրեք դուք սա-
լաձև

Յեվ այն սալին քարից կերտած մի մուրճ հանդչի թող
յեռաթև.

Յես ուզում եմ հողի մեջ ել կատարել մի սև աշխա-
տանք,

Մնացողաց—դեռ լերկար կյանք, գնացողաց— իբ
հարզը տանք:

Իմ սալ քարի պաղ ճակատին դրեք դուք իմ վերջին
կտակ,

Վոր թողնում եմ իմ զինակից ընկերներին վորպես ա-
վանդ.

—Բանվոր ես դու, գրչի մշակ—զգվիր, սիրի մեր աշ-
խատանք,

Հավերժ լինի հիշատակը, ով մահանա իբ ճախարակ
իբ փոկի տակ:

1920

Ազգայիններին	5
Մեկ ել, մեկ ել	6
Հեղափոխություն	7
Գործարան	9
Աշխատանքի յերգը	11
Դարբնի յերգը	12
Ետապը	13
Մեռան՝ չկորան	14
Յես ձեզ ասում եմ	16
Պահալը	17
Կաթսավար	18
Ամբոխն իմ աշխարհը	19
Մաքսոման ժամին	21
Լուսաբացին	22
Համերգ	23
Դարբինը	24
Յերկու տխրյան	25
Գործարանում	27
Աշխատանքի ելեգիաներ/ց (պղնձահանքում)	29
Աշխատանքի ելեգիաներից, (հեվում եք ու տնջում)	30
Գյուղի յերեկոն	31
Իմ սերը	33
Զարթոնք	34
Վ. Ի. Լենին-ին	35
Պոետի Երանոսյան-ին	36
Գեղարգ-Աթարբեգյան	37
Քանավեց եյին	39
Նահատակները	41
Ընկեր, դու մի լա	42

Մի ասիւր	43
Իննեւորդ ակիւր	44
Մարգարէ յեմ յես	45
Քաղաքը	46
Սեյֆերը	48
Ներքին հարկերում	49
«Քաղաք» կիսավարտ պոյեմից	50
Մայիս-մեկյան յերդ	55
Յես այն եմ ուրում	56
Կարմիր դարնան	57
Կոմունարի մահը	58
Դաշնակը ընկավ	60
Հարձիկն ու աղջիկը	61
Նամուս ու զէյրաթ	62
Ոտաւրն ու հարադատը	63
Կըտենի	65
Հատվածներ «Նոր ասավոտ» պոյեմից	67
Հատվածներ «Փոթորիկ» պոյեմից	72
Հատվածներ «Հավասարութիւն» պոյեմից	76
Բայշեփիկ և Շիր-կանալը	85
Լենինգրադյան պոյեմից	93
Մեքաքոսադործարանում	102
Տեքսաիլ բանիւրի յերդը	103
Զորագետւմ	104
Աճում ենք	105
Իմ կտակը	107





502

ՀՀ Ազգային գրադարան



NL0348629

37090